



ԼՈՅՍ

ԿՐՈՆԵԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԵՅԻՆ
ՊԱՇՏՈՆԵԿԱՆ ԵՌԵՄՍԵԱՅ ՀՐԵՏԱՐԵԿՈՒԹԻՒՆ
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԸՈՆՋՆՈՐԳՈՒԹԵԱՆ



LUYS — Revue trimestrielle

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : prelacy@armenianprelacy.ca



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

| | |
|---------------------------------------|-------------------------|
| ԹԱՐԳՄԱՆՉԱՑ | Զարեհ Արք. Ազնաուրեան |
| ՈՍԿԵԴԱՐԵԱՆ ՔԵՐԹՈՂՆԵՐՈՒՆ | Հ. Եփրեմ Տէր Ղազարեան |
| ՍՈՒՐԲԵՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՋ | Վեր. Ժիրայր Պատիկեան |
| ԱՍՏՈՒԱԾ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆՑ | Յակոբ Արք. Գլնճեան |
| ԻՐԵՆԻՈՍ ԼԻՈՆՑԻ | Թամար Տասնապետեան |
| ՄԻ ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ | Յակոբ Արք. Գլնճեան |
| ԽՈՐԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԲԱՐՈՅԵԱՆԻ ԿԻԼԻԿԻՈՅ | |
| ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՕԾՈՒՄԸ | Թորգոմ Փօթաճեան |
| ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ՝ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ | |
| ՆՈՐԱԳՈՅՆ «ԶՈՀ»Ը | Գրիգոր Ծ. վրդ. Զիֆթճեան |
| ՍՓԻՒՌԸ ԵՒ ՆՈՐ ՄԱԿԱԲԷԱԿԱՆՈՒԹԵԱՆ | |
| ՄԸ ՍՊԱՍՈՒՄԸ | Գառնիկ Ք. Գ. |
| ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ | Կարօ Նոխստեան |
| ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ | Բաբգէն Թօփճեան |

«Ամառան» եւ «Զմեռան» հատորներէն քաղուած Աստուածամօր քարոզները

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

«Աստուծոյ եկեղեցիներուն մէջ մենք կը պարծեանք
ձեզմով, այն համբերութեան եւ հաւատքին համար, որ
դուք ցուցաբերեցիք ձեր կրած բոլոր հալածանքներուն
եւ նեղութիւններուն մէջ»:
(Բ. Թս 1.4)

*Բոլոր մը մարդիկ: Պատմութեան դիմագիծը փոխելու կոչուած
մարդիկ:*

405 թուականն էր: Դէպի Վաղարշապատ մայրաքաղաք տանող
ճամբուն վրայ, Ռահ գետի ափին, խոնուեր էր ժողովուրդը իր Սահակ
հայրապետով ու հոգեւորականաց դասով, իր Վռամշապուհ թագաւորով
ու արքունիքով միասին: Կը դիմաւորէին հրաշքը իրեն հետ բերող մեծ
սուրբը՝ Մեսրոպ Մաշտոցը իր պանծալի աշակերտներով: Պանծալի էր
դիմաւորումը ինք, արժանավայել, եւ յաւէտ յիշատակելի:

405 թուականին Հայ պատմութիւնը յեղաշրջուեցաւ յանկարծո-
րէն: Պատերազմ չմղեցինք, աշխարհակալութիւն չհաստատեցինք: Բայց
հետագայ բոլոր դարերու պատերազմները շահելու աննիւթեղէն գաղտ-
նի գէնքին տիրացանք: Աշխարհացրիւ մեր ժողովուրդին տիրակալու-
թիւնը ապահովեցինք:

Իրօք հրաշալի էր գէնքը, աննուաճելի գէնքը, որ միայն երեսուն-
վեց բերան ունէր իր մէջ, բայց որոնք կրնային բացուիլ աշխարհի բոլոր
լեզուներուն ու մշակոյթներուն վրայ, զանոնք հիւրընկալելու եւ անոնց
հետ հաւասարէ-հաւասար զրոյցի նստելու համար:

405: Յաղթանակի թուական, որ մեր օրացոյցները կը նշեն իբրեւ
«Տօն ազգային եւ եկեղեցական»:

Այդ յաղթանակին կերտիչներն են մեր Թարգմանիչները, Ս. Մես-
րոպ Մաշտոց, Ս. Սահակ Պարթեւ հայրապետ, Յովսէփ Հողոցմեցի, Եղիշէ
վարդապետ, Եղնիկ Կողբացի եպիսկոպոս, Յովսէփ Պաղնացի, Յովհան
Եկեղեցացի, Ղեւոնդ Երէց եւ Կորիւն Աքանչելի վարդապետներ, Մովսէս
Քերթողահայր եպիսկոպոս, Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայ վարդապետ, եւ
դեռ շատ ուրիշներ:

Մեր մշտական հերոսներն են մեր Թարգմանիչները, որոնց մէջ կը
տեսնենք.

1. Ծմարիտ աշակերտները Աստուծոյ Խօսքին:

Աստուծոյ մարդ եղան անոնք, նախքան ժողովուրդի մարդ ըլլալը:
Ո՛չ միայն սերտեցին ու սորվեցան, այլ իւրացուցին եւ ապրեցան
Աստուծոյ Խօսքը, Աստուծածաշունչ Մատեանը: Զայն իւրացուցին այն-

պէս՝ որ անոր տողերուն ընդմէջէն Աստուած հայերէ՛ն սկսաւ խօսիլ իրենց, եւ իրենք հայաբարբառ այդ կենդանացուցիչ ձայնը ուզեցին նա- եւ հայերէնով արձանացած տեսնել մագաղաթի վրայ, նախքան իրենց ազգակիցներուն սրտի տախտակին վրայ արձանագրելը: Եւ այդպէս ալ՝ դարձան հաւատքի լոյսին հրավառ ջահերը, Աստուծոյ լոյսին բարձր աշտանակները, ճրագարանն՝ ըր:

2. ԾՃՄԱՐԻՒՄ ՈՒՍՈՒԳԻՉՆԵՐԸ:

Լոյսը իր մէջ առնողը չի՛ կրնար գայն իր մէջ խաւարեցնել, ո՛չ ալ իր շրջապատի խաւարին դիմաց կրնայ անտարբեր մնալ: ԾՃՄարտու- թիւնը ճանչցողը եւ ընդունողը չի՛ կրնար անոր ձայնը իր մէջ լռեցնել, ո՛չ ալ կրնայ ստութիւնը հանդուրժել: Աստուածային իմաստութեան ակէն ըմպողը չի՛ կրնար գայն իր մէջ փակել եւ ամլացնել ու թաղել, ո՛չ ալ կրնայ իմաստութեան ծարաւ հոգիներուն ի տես՝ չաղբիւրանալ եւ չբաշխել առատօրէն:

Աստուծոյ Խօսքին ճշմարիտ աշակերտները եղան նաեւ ճշմարիտ ուսուցիչները: Անլոյս էր Հայաստան աշխարհը. մտքի, հոգիի եւ սրտի լո՛յս պէտք էր պարգեւել: Եւ ճշմարիտ գիտութիւնը ճանչցած սքանչելի մեր հայրերը այդ գիտութեամբ պայծառակերպ նորոգեցին մեր երկիրը, գայն Հայախօս ու Հայագիր դպրոցներով ողողելով, եւ ուսման ատակ բոլո՛ր մեր գաւակները սնուցանելով «բանին» քաղցրութեամբ, արբեց- նելով լոյսի՛ն գինիով:

3. ԾՃՄԱՐԻՒՄ յեղափոխակաՆՆԵՐԸ:

Յեղափոխականը սոսկ գաղափարի մարդը չէ, այլ նաեւ՝ տեսիլքի մարդը, նախաձեռնութեան մարդը, խիզախ ծրագրումներու մարդը, գործի՛ մարդը:

Մեր թարգմանիչ վարդապետները խաւարին մէջ լոյսը տեսնողներ չեղա՛ն միայն, այլ նաեւ եղան լոյսով սնանող եւ լոյսին տարածման ի խնդիր ամէն գոհողութիւն յանձն առնող մարդիկ, ապագային մասին խոր- հող, ապագան իրենց մտքին մէջ պայծառօրէն գծադրող, եւ այդ ուղղու- թեամբ համապատասխան ծրագրում կատարող մարդիկ, որոնք ոեւէ ար- գելքի դիմաց կանգ չառին, իրագործելու համար իրենց լուսեղէն տեսիլքը:

Ասով իսկ՝ յեղափոխեցի՛ն Հայ կեանքը, յեղափոխեցի՛ն մեր պատ- մութիւնը:

Զինեցի՛ն Հայ հոգին, վառեցի՛ն անոր ազգային գիտակցութիւնը, իր արժէքներուն հպարտութի՛ւնը տուին անոր, եւ յաւերժութեան պայ- քարի ու յաղթանակի վստահութիւնը ներարկեցին անոնց արեան մէջ:

4. ԾՃՄԱՐԻՒՄ ԸՆԴՈՒՄՆԵՐԸ:

Թարգմանչաց սերունդով եւ աշխատանքով՝ Հայոց պատմութեան

մէջ նոր դարաշրջան բացուեցաւ: Անոնք մեր կեանքը եւ պատմութիւնը նորոգեցին, բաժանման որոշակի լուսագիծով մը սահմանազատելով հինն ու նորը, անգիր-գրականութեան եւ նորագիր դպրութեան ժամանակաշրջանները, նախա-Մեսրոպեանն ու Մեսրոպեանը: Ճշմարիտ նորարարներ եղան անոնք, որոնք իւրապատուկ եւ անանց դրոշմ, գոյն ու բոյր տուին իրենց դարուն եւ հետագայ բոլոր դարերուն: Որոնք մեր լեզուն արձանացնելով եւ գիրի ճամբով բերեղացնելով՝ պայքարի գէնք ու միաւորիչ հզօր շաղախ պարգեւեցին Հայութեան:

Թարգմանչաց խիզախումը եւ նուաճումը կը մնան յաւերժ ուսանելի եւ օրինակելի, եւ անոնց յիշատակը յաւէտ օրհնելի:

Այսօր աշակերտութիւնն ու ուսուցչութիւնը կորսնցուցեր են իրենց որակն ու բարձրութիւնը, յեղափոխական անուանումը շահաբեր դիմակ դարձեր է մակաբոյժ բախտախնդրութեան, նորարարութիւնը կը շփոթուի աճպարարութեան եւ անճարակ ներկարարութեան հետ:

Մինչդեռ՝ Հայ կեանքը պէտք ունի ճշմարիտ նորութեան, եւ ատոր համար պէտք ունի ճշմարիտ յեղափոխականներու: Պէտք ունի լոյսին ու ճշմարտութեան աշակերտած եւ հաւատացած նոր ուսուցիչներու, նոր թարգմանիչներու, որոնք կարենան ընդարմացած Հայ միտքը վերստին արթնցնել եւ լուսաւորել, որոնք կարենան ժամանակի ոգին ճշմարտապէս, ազգախօս լեզուով թարգմանել ամենօրեայ մեր կեանքին մէջ, այդ կեանքը նորովի յեղաշրջելու, յեղափոխելու, նոր ժամանակին համապատասխան նոր՝ բայց ճշմարիտ դիմագիծ մը տալու անոր, եւ շաղախիչ նոր ու հզօր հրաշքով մը վերստին միաւորելու Հայութեան կոտորակեալ հատուածները:

ԶԱՐԵՆՆԱՐՔ. Ա.ԶՆԱԻՈՐԵԱՆ

«Մեր հազարամեայ անցեալի այն երկար ճանապարհին, որի վրայ փռուած են մեր անհուն տառապանքները, ո՛չ բանակներ ունէինք մեր պահպանութեան համար, ո՛չ ուժ, ո՛չ հնարաւորութիւն, ո՛չ էլ դրսի օգնութիւն, այլ մի հատիկ բան միայն՝ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳԻՐԸ»:

ԼԷՕ

ՈՍԿԵՂԱՐԵԱՆ ՔԵՐԹՈՂՆԵՐՈՒՆ

Անցեալի մութ երկինքին մէջ
Աստղերու պէս ոսկեհեր,
Դեռ կը պլպլաք քաղցրաթրթիռ
Ոսկեդարեան քերթողներ:

Թէեւ շիջած՝ դուք կը ննջէք,
Նման մարած աստղերու.
Բայց լոյսը ձեր մեզ կը հասնի
Խոր ծերպերէն դարերու:

Ովկէաններու խորը փրփրած՝
Ո՛վ մրրիկներ բազմալար.
Ձեր խրոխտ շունչով արծարծեցիք
Հայոց Ոգին դալկահար:

Թէեւ յոգնած՝ դուք կը լըռէք
Պատմութեան մէջ հայրենի.
Բայց երգը ձեր ալիքներուն
Մեր ափերուն կը հասնի:

Տըգիտութեան ամպրոպին մէջ,
Շանթերու պէս շողալով,
Հրդեհեցիք հաննարն հայկեան
Ձեր երակին կըրակով:

Թէեւ բեկած՝ ալ չէք շողար,
Ո՛վ կայծակներ հուր-բերան,
Բայց փայլակները ձեր մտքին,
Մեր սրտին մէջ կը շողան:

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ

ՍՈՒՐԲԵՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՉ

Նախ ըսենք թէ ամէն կրօնքի մէջ կայ սրբութեան գաղափարը, որ յստակ նշան մըն է աստուածային ներկայութեան եւ ներգործութեան մարդոց կեանքին մէջ: Ասիկա երեւոյթ մըն է ուր մարդս պահ մը կանգ կ'առնէ, ու կը մօտենայ Անոր ամենայն ակնածանքով, ահով ու դողով: Պէտք է ըսել, թէ սրբութիւնը, ի մէջ այլոց, ստորագելի մը չէ, այսինքն՝ անհկա աստուածային ստորագելիներէն մին չէ, այլ ներքին իրականութիւն մը՝ որու հետ կապ ունին բոլոր միւս յատկութիւնները (ստորագելիները) Աստուծոյ:

Միւս կողմէ՝ պէտք է ըսել թէ սրբութիւնը այնքան ներքին եւ խորհրդաւոր իրողութիւն մըն է, որ մարդկային որեւէ բացատրութիւն անոր մասին անբաւարար է: Այլ խօսքով՝ կարելի չէ համապարփակ կամ ամբողջական եւ գոհացուցիչ սահմանում մը տալ անոր: Մարդկային միտքը եւ լեզուն կարող չեն լման հասկնալ զայն եւ բացատրել: Կրնանք ըսել, թէ սրբութիւնը փորձառութիւն մըն է, փորձառութիւն մը որ միայն զայն ապրող անհատը կրնայ զգալ, եւ կրնայ ունենալ անոր համապատասխան ապրում մը, անկէ մղուելով: Անոր կեանքը, խօսքը, վարմունքը, բոլորը անկէ կը ներշնչուին, եւ անոր ուղիով կ'ընթանան:

Սրբութիւնը իր ապրումով կարելի է որակել որպէս վկայութիւն մը աստուածային ներկայութեան, որ կրնայ յառաջացնել տարբեր եւ գանազան հակադեցութիւններ տարբեր մարդոց սրտին մէջ, սկսելով մէկ ծայրայեղութիւնէն մինչեւ անոր հակառակ գացող ծայրայեղութիւնը, հիացումէն մինչեւ բիրտ եւ թշնամական հակառակութիւն: Հին Կտակարանին մէջ սրբութիւնը առաւելաբար կը հասկցուի գատուած ըլլալ, հասարակէն զատուիլ եւ ըլլալ յատուկ, այն ինչ որ կը պատկանի Աստուծոյ, եւ ինչ որ կ'ընդունի Աստուծոյ կնիքը, թէ ան սուրբ է, գատուած եւ դուրս բերուած ընդհանուր հասարակաց վիճակէն:

Այս կերպով կրնանք ըսել, թէ սրբութեան հետ անմիջական աղերս ունին հետեւեալ իրողութիւնները, կամ յատկութիւնները՝ սրբութիւն եւ կրակ (Աստուած կրակով, այրող մորենիին մէջէ խօսեցաւ Մովսէսի հետ), սրբութիւն եւ նախանձ (տասնաբանեայ պատուիրաններուն մէջ յստակօրէն կ'ըսուի. «Ինծմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս», ու Բ.Օր.5.9. «Ես, բու Տէրդ, նախանձու Աստուած եմ»), սրբութիւն եւ տրտմութիւն (բարկութիւն), սրբութիւն եւ վախ (երկիւղ), սրբութիւն եւ բաժանում, կամ հեռաւորութիւն, սրբութիւն եւ մաքրութիւն, սրբութիւն եւ բաժանում, սրբութիւն եւ հիասքանչութիւն, սրբութիւն եւ մեծութիւն, սրբութիւն եւ բարձրութիւն:

Գալով Նոր Կտակարանին՝ հոն սրբութեան հասկացողութիւնը հիմնուած է Հին Կտակարանի ըմբռնումին վրայ գլխաւորաբար, յատկապէս 70նից թարգմանութեանէն բխած եզրերով, ինչպէս՝ «ագիոս»

սուրբ, «ազիոսինի» սրբութիւն, «ազիասմոս» սրբացում, եւլն: Նաեւ կան սրբութեան հետ կապ ունեցող ուրիշ եզրեր, ինչպէս՝ սէր, կարեկցութիւն եւ ողորմութիւն:

Գլխաւոր տարբերութիւնը սրբութեան Հին Կտակարանին եւ Նոր Կտակարանին միջեւ այն է, թէ՛ ան կը կատարուի Սուրբ Հոգիին միջոցաւ. բան մը որ կը հանդիպինք միայն երեք անգամ հին Կտակարանին մէջ, Սաղ. 51.11, Ես. 63.10 եւ Ես. 63.11, մինչ Նոր Կտակարանին մէջ անոր կը հանդիպինք 90 անգամ: Թէ՛ Հին Կտակարանին մէջ եւ թէ՛ ալ Նոր Կտակարանին մէջ սրբութեան արտայայտութեան նկատմամբ կը գործածուին յատուկ պաշտամունքի եզրեր, ինչպէս՝ Մեծ, Ամենակալ, Հրաշալի, Արդար, Ճշմարիտ, Ահաւոր, Արդարութեան Թագաւոր, եւլն:

Նոր Կտակարանին մէջ սրբութիւնը Քրիստոսի կողմէն կանչուած ըլլալուն մէջ կը կայանայ, այսինքն՝ ան որ կանչուած է Քրիստոսէն արդէն իսկ սրբագործութեան ընթացքին մէջ կը գտնուի, որովհետեւ Սուրբ Հոգիին միջոցաւ նոր ծնունդ կ'առնէ հաւատացեալը: Անիկա կեանք մըն է վերստին ծնունդով սկսուած, վերէն, Սուրբ Հոգիէն, Աստուծոյ ծնած նոր արարած մըն է ան, ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքեալ իր Կորնթացիներուն գրած 2րդ թուղթին մէջ (5.17), «Ուրեմն եթէ մէկը Քրիստոսի մէջ է, անիկա նոր ստեղծուած մըն է: Հիները անցան եւ ահա ամէն բան նոր եղաւ»:

Այս կը նշանակէ նաեւ, թէ սրբութիւնը աւելի լայնօրէն մատչելի է, եւ անոր մէջ մտնելու սահմանափակումներ չկան: Պօղոս առաքեալ կը տեսնէ իր հիմնած նոր եկեղեցիներուն մէջ որպէս սուրբեր ոչ թէ միայն մի քանի անձեր, այլ՝ ամբողջ եկեղեցին իր բոլոր անդամներով միասին: Օրինակի համար՝ երբ ան կը գրէ Հռոմի եկեղեցիին, կամ Կորնթոսի եկեղեցիին, կամ որեւէ տուեալ եկեղեցիի մը, ան կը գրէ բոլոր անոնց որոնք կը մասնակցին եկեղեցիի մը պաշտամունքի արարողութեան որպէս «սուրբ ըլլալու կանչուածներ»: Օրինակ՝ Կորնթացոց զրկած իր երկրորդ թուղթին սկիզբը (1.1) կը գրէ. «Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին, եւ Աքայիայի մէջ եղող բոլոր սուրբերուն»: Կրկին՝ Եփես. (1.1)ի մէջ կ'ըսէ ան. «Եփեսոսի մէջ եղած սուրբերուն»: Իսկ Կողոսացոց զրկած թուղթին մէջ ան կ'ըսէ, 1.2. «Կողոսայի մէջ եղող Քրիստոսով սուրբ ու հաւատացեալ եղբայրներուն»:

Կարծեմ բաւական յստակ է պատկերը, թէ Պօղոս առաքեալի ըմբռնումով, որ քրիստոնէական աստուածաբանութեան հիմնադիրն է, Քրիստոսի եկեղեցիին մասնակցող բոլոր հաւատացեալները սուրբ կը նկատուին: Սակայն պէտք է յստակացնել այն կէտը, թէ սուրբ կոչել չի նշանակեր թէ քրիստոնէայ հաւատացեալը հասած է սրբութեան կատարելութեան: Պէտք է մոռնալ Պօղոս առաքեալի կրկին ու կրկին ըսած խօսքը այս ուղղութեամբ, «սուրբ ըլլալու կանչուածներուդ», այսինքն՝ հաւատացեալը կը կանչուի Քրիստոսի կողմէ՝ կը մտնէ սրբութեան այս ընթացքին մէջ, ուր ան պէտք է աճի ու յառաջդիմէ:

Հոս կ'ուզեմ յիշել Յիսուսի խօսքերէն երկուքը, որոնք ըստւած են Լեբան Գարողին մէջ: Անոնք որ կը կարդան Աստուածաշունչ մատեանը ծանօթ ըլլալու են Յիսուսի խօսած երանելիներուն շարքին. «Երանի անոնց որոնք սրտով մաքուր են, որովհետեւ անոնք պիտի տեսնեն զԱստուած»: Հոս սրտով մաքուր կը հասկնանք անոնք որոնք հասած են սրբութեան բարձրագոյն աստիճանին: Այո՛, երանելի են անոնք որովհետեւ պիտի ներկայանան Աստուծոյ առջեւ:

Իսկ այս նոյն Մատ. 5րդ գլուխին վերջաւորութեան Յիսուս իր խօսքը կը վերջացնէ հետեւեալ յորդորով. «Ուրեմն դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»: Հոս կը հասկնանք, թէ Յիսուս կը կանչէ իր աշակերտները եւ իր հետեւորդները որ կատարեալին ձգտին: Իսկ Պողոս առաքեալ Եփեսացիներուն ուղղած իր թուղթին մէջ կ'ըսէ, ակնարկելով եկեղեցւոյ զանազան պաշտօնեաներուն, թէ իրենց գործը եւ պարտականութիւնն է աշխատիլ եկեղեցւոյ ժողովուրդին մէջ սուրբերու կատարելութեան համար եւ Քրիստոսի մարմնի շինութեան համար:

Պողոս առաքեալ կը նկարագրէ այս սրբութեան կեանքը իր Եփեսացիներուն գրած թուղթին մէջ հետեւեալ կերպով. «Արդ Աստուծոյ նմանող եղէք սիրելի զաւակներու պէս, եւ սիրով վարուեցէ՛ք, ինչպէս Քրիստոս պլ մեզ սիրեց ու իր անձը մեզի համար մատնեց անուշահոտ պատարագ ու զոհ ըլլալով Աստուծոյ: Բայց շնութեան եւ ամէն կերպ պղծութեան կամ ագահութեան անունը անգամ պէտք չէ յիշուի ձեր մէջ, ինչպէս կը վայլէ սուրբերուն, եւ գարշելի բաներ կամ յիմարական խօսքեր կամ խեղկատակութիւն, որ չի վայլեր, այլ մանաւանդ՝ գոհութիւն: Քանզի գիտէք, թէ ամէն շնացող կամ պիղծ կամ ագահ, որ կռապաշտ է, Քրիստոսի եւ Աստուծոյ թագաւորութեան մէջ ժառանգութիւն չունի: Չըլլայ որ մէկը ձեզ խաբէ փուն խօսքերով, որովհետեւ այս բաներուն համար Աստուծոյ բարկութիւնը կուգայ անհնազանդութեան որդիներուն վրայ: Ուստի անոնց հաղորդ մի ըլլա՛ք: Որովհետեւ թէեւ ատեն մը դուք խաւարի մէջ էիք, բայց հիմա լոյս էք Տէրոջմով. ուստի լոյսի որդիներու պէս փայլեցէ՛ք: Որովհետեւ Հոգիին պտուղը ամէն կերպ բարութիւնով, արդարութիւնով ու նշմարութիւնով է: Քննեցէ՛ք թէ ինչ է Տէրոջը հանելիւն. ու կցորդ մի ըլլա՛ք խաւարին անպտուղ գործերուն, այլ մանաւանդ զանոնք յանդիմանեցէ՛ք: Որովհետեւ անոնց մէջ գաղտուկ գործուած բաներու մասին խօսիլն ալ ամօք է:...Նայեցէ՛ք որ զգուշութեամբ փայլէ՛ք, ո՛չ թէ անմիտներու պէս:...Անմիտ մի՛ ըլլա՛ք, հապա իմացէ՛ք, թէ ի՞նչ է Տէրոջը կամքը: Մի գիտովնա՛ք գիմիով, ...հապա Հոգիով լեցուեցէ՛ք: Սաղմոսներով ու օրհնութիւններով եւ հոգեւոր երգերով ձեր մէջ խօսակցելով՝ երգեցէ՛ք ու սաղմոս ըսէ՛ք Տէրոջը ձեր սրտերուն մէջ: Ամէն ատեն ամէն բանի համար գոհութիւն տուէ՛ք Աստուծոյ ու Հօրը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսին անունովը»:

Ուրեմն՝ մեր առջեւ ունինք ամբողջ կեանք մը վարելու սրբութիւնով եւ մաքրութիւնով, այն կոչումին համեմատ որով կանչուած ենք ըլլալու սուրբեր, լուսոյ որդիներ, միշտ ալ փնտռելով Աստուծոյ կամքը, զայն կատարելու ամենայն եռանդով ու գոհութիւնով:

Այս ուղղութեամբ Պօղոս առաքեալ կուտայ եզակի յորդոր մը որ կիրարկելի է ամէն քրիստոնեայ հաւատացեալի, ամէն դարու եւ ամէն պարագայի: Այս յորդորը կը գտնենք Հռոմայեցիներու թուղթին 12րդ գլխուն մէջ: Այսպէս կ'ըսէ ան. «Արդ կ'աղաչեմ՝ ձեզի, եղբայրներ, Աստուծոյ ողորմութիւնովը, որ ձեր մարմինները ընծայէ կենդանի գոհ մը՝ սուրբ, Աստուծոյ հանելի, որ է ձեր բանաւոր պաշտօնը: Եւ մի կերպարանիք այս աշխարհին կերպարանովը, հապա ձեր մտքին նորոգութիւնով նորոգուեցէք, որպէսզի բնութիւն թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը, որ բարի ու հանելի եւ կատարեալ է: ...Սէրը առանց կեղծաւորութեան ըլլայ, չարէն զգուշով, բարիին յարելով: Եղբայրսիրութեան մէջ իրարու վրայ գործովից եղէք. պատուելու մէջ իրարմէ անցէք: Ջանքի մէջ թուապիտ մի ըլլա՛ք: Հոգիով բորբոքեցէք. Տէրոջը ծառայեցէք. յոյսով ուրախ եղէք, նեղութեան մէջ համբերեցէք, ստեպ աղօթքի կեցէք: Սուրբերուն պէտքերուն հաղորդ եղէք. հիւրասիրութեան ետեւ եղէք: Չեզ հալածողները օրհնեցէք: Խնդացողներուն հետ խնդացէք, եւ լացողներուն հետ լացէք»: ...Իրարու վրայ միեւնոյն խորհուրդը ունեցէք: Ամբարտաւանութիւն մի ընէք, հապա խոնարհներուն հետ խոնարհեցէք: Դուրս ձեզ իմաստունի տեղ մի դնէք: Չարութեան փոխարէն մէկուն չարութիւն մի հատուցանէք: Բոլոր մարդոց առջեւ բարի բաներ ընելու հոգ տարէք: Որչափ որ կարելի է ձեզի՝ ամէն մարդու հետ խաղաղութիւն ունեցէք: ...Վրէժխնդրութիւն մի ընէք՝ ձեր անձերուն համար, հապա բարկութեան տեղի տուէք, որովհետեւ գրուած է. վրէժխնդրութիւնը իմա է, ես պիտի հատուցանեմ, կ'ըսէ Տէրը: Ուստի եթէ թշնամիդ անօթեցեր է, հաց տուր անոր, եթէ ծարաւ է՝ ջուր տուր անոր. գայս ընելով՝ անոր գլխուն վրայ կրակի կայծեր պիտի դիգես: Չարէն մի յաղթուիր, հապա բարիով յաղթ չարին»:

Ահա այս կերպով մեր առջեւ կը դրուի քրիստոնէական կեանքի ճանապարհի քարտէսը, եւ սրբութեան կեանքին ամփոփ ուղեցոյցը: Սիրելիներ, բոլորս ալ որպէս հայ եւ քրիստոնեայ, կը կանչուինք Յիսուս Քրիստոսի կողմէ իր բերաւորներուն շարքին մէջ մեր տեղը գրաւելու:

Մեր ժողովուրդը դարեր մնացեր է հաւատարիմ քրիստոնեայ դաւանանքին: Եւ սակայն հարց է թէ այսօր ո՞րչափով կ'արժեցնենք մեր նախնիքներուն քրիստոնէական եռանդը: Անցեալին մէջ մենք ունեցած ենք հաւատքի հերոսներ, որոնք հասած են հաւատքի ամենաբարձր աստիճաններուն, եւ արժեցուցած են սրբակեաց քրիստոնեայի մակդիրը:

ՎԵՐ. ԺԻՐԱՅՐ ՊՁՏԻԿԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆՑ

Դու Տէ՛ր, հզօր եւ անվախնան,
Դու Աստուած ես ուրախութեանց:
Համաձայն Քո վկայութեան՝
Բարձունքներից մեզ մօտ եկար
Որ բերես մեզ ուրախութիւն
Լիակատար:

Բայցաշխարհում,
Տրտմութեան այս մռայլ հովտում,
Աչքերից ե՞րբ է դադարել
Արտասուէ՞ր՝
Զաւակ կորցըրած մայրերի,
Սիրուց գրկուած, պանդուխտ դարձած
Եւ անընկեր հոգիների,
Վայրագարար բռնադատուած
Ու հալածուած անմեղների:

Տէր ի՛մ,
Այս աշխարհում մեր բաժինը
Տառապանք է,
Նաեւ՝ պայքար ընդդէմ չարի,
Նրա գծուծ դեպքանների,
Յանուն կեանքի, յանուն սիրոյ,
Արդարութեան ու բերկրանքի:

Հետեւելով Քո հետքերին
Եւ նայելով Քո սուրբ Խաչին,
Վշտերի մէջ Դու թաթախուած,
Ամենազօր Տէր ի՛մ, Աստուած,
Եւ առնելով աւետիսը
Հրաշափառ Քո Յարութեան,
Գիտակցում ենք,
Թէ փոթորկին կը յաջորդի
Զուարթագին խաղաղութիւն,
Տառապանքին էլ՝ յաղթանակ,
Մահուան դաժան յոխորտանքին՝
Անփառունակ մի պարտութիւն,
Եւ այդպէս միշտ, նայելով Քեզ՝
Տէր իմ, Յիսու՛ս, մենք կ'ունենանք
Ուրախութիւն լիակատար:

ՅԱԿՈՒՅ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

ԻՐԵՆԻՈՍ ԼԻՈՆՅԻ

(մեռած շ. 200իև)

Լիոնի եպիսկոպոսը, որ Փոթէնին կը յաջորդէ 177իւն, ծանօթ՝ Գնոստիկականութեան դէմ իր գրած հերքումով, հաւատքի սիւն մըն է, Աւետարանի առաքեալ մը, սկզբնարար մը եւ աստուածաբան մը:

1. Գնոստիկներու տագնապը

Լիոնի եպիսկոպոսին անունը գնոստիկեան տագնապին հետ առնչուած կը մնայ: Իր կարեւորագոյն գործը Կեղծ գիտութեան հերքումն է:

Նախ պէտք է լաւ գանազանել գիտութիւնը գնոստիկութենէն: Գիտութիւնը (gnosis), Յունարէն բառ մըն է, որ կը նշանակէ՝ ճանաչողութիւն. վտանգաւոր կամ ոչ-ուղղափառ հասկացողութիւն մը չէ: Հրէութիւնը այս բառը կը գործադրէ աւելի փորձառութեան առումով, քան թէ մտաւորական ճանաչողութեան: Այս իմաստը ունի Դիդախի աղօթքին մէջ:

Կղեմէս Աղեքսանդրացիի համար «Գիտութիւնը Աւետարանին իմացականութիւնն է»: Իրենիոս պիտի ընդունէր այս սահմանումը, Եկեղեցիին վերապահելով իսկական գիտութիւնը: Բայց ան պէտք է ինքզինք սահմանէ կեղծ գիտութեան կամ գիտութիւններու կառուցումներուն յարաբերաբար:

Գնոստիկութիւնները դեռ նորադարձ մտաւորականներու վարդապետութիւններ են, որոնք 120-130ական թուականներուն մեծ ծաւալ կը ստանան: Անոնք Յուստինոսի նման հաւատքը չեն նկատեր առաքեալներու եւ Եկեղեցիի աւանդութիւնը, այլ զայն կը գործածեն եւ կը շահագործեն իրենց սեփական փիլիսոփայութիւններուն եւ համակարգներուն համար: Ճանաչողութեան իր բնական պահանջը կը դառնայ բռնաբարում եւ ոչ թէ խորհուրդի ընդունում:

Բ. դարու կէսին, գնոստիկեան գրականութիւնը աւելի ընդարձակ եւ աշխոյժ է, քան ուղղափառ գրականութիւնը: Ան կ'օգտագործէ ամէն ինչ. Ս. Գիրքը, պարականոնները, աստուածաբանութիւնը, եւ մինչեւ իսկ բանաստեղծութիւնը եւ աղօթքը: Զանազան գնոստիկեան շարժումներ կը տարածուին Սեւ ծովէն եւ մանաւանդ Աղեքսանդրիայէն, որ իրենց կեդրոնն է՝ մինչեւ Հռոմ, Կարթագինէ, վերջապէս՝ քրիստոնէութեան ածման վայր եղող Լիոն:

2. Իրենիոսի ուսուցումը

Իրենիոսի կարեւորագոյն գործը կը կոչուի Հերձուածներուն դէմ կամ կեղծ գիտութեան հերքում, հինգ հատորներով: Ան գրած է Առաքելական ֆարսուքեան փաստերը, որ ուղիղ հաւատքին քրիստոնէականն է:

Գնոստիկութիւններու ըսածներուն դիմաց, Իրենիոս սուրբգրական

տուեալին եւ աւետարանական ուսուցումին կը կառչի, ուսուցում՝ որ առաքեալներէն տրուած է եւ հաւատքի հանգանակով փոխանցուած: Հակառակ գնոստիկութիւններու հիմնական երկուութեան, ան միութիւնը կը հաստատէ. մէկ է Աստուած, մէկ՝ Քրիստոսը, մէկ՝ մարդը, մէկ՝ եկեղեցին, մէկ՝ հաւատքը:

ԾՃՄԱՐԻՒՄ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ԾՃՄԱՐԻՒՄ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ մեզի կը ծանօթացնէ ո՛չ թէ Աստուծոյ իսկ խորհուրդը, այլ ստեղծագործութիւնը, մարդուն հանդէպ իր սիրոյն գործը, եւ ինչ որ Իրենիոս կը կոչէ «տնտեսութիւն», այսինքն՝ փրկչական պատմութեան մէջ տարածուող աստուածային ծրագիրը: Մրագիրը ծնունդ կ'առնէ Երրորդութենէն եւ մարդը կ'առաջնորդէ ստեղծագործութենէն մինչեւ փառաբանանք, Աստուծոյ տեսութեամբ:

Իրենիոսի առաջին հաստատումը կը վերաբերի Աստուծոյ. «Մէկ ստեղծողէն եւ կազմողէն գատ ուրիշ Աստուած չկայ, ուրեմն փրկութիւն չկայ իրմէ եւ «երկու ձեռքերէն», այսինքն՝ Հօրմէն եւ Հոգիէն դուրս: Ամբողջ ստեղծագործութիւնը Աստուծոյ գործն է, ուրեմն լաւ է ան, նաեւ նրկթը, եւ փրկութեան կարելիութիւն ունի:

ՏՃՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԸ

Մարդուն ստեղծագործութիւնը նրկթին սիրտին մէջ կ'իրագործուի. մարդը մարմնի մը մէջ ինկած հոգի մը չէ, այլ՝ «հոգիացած» մարմին մը, բնակուած Հոգիէն, որ կը պահէ իր միութիւնը եւ իր անապակա-նութիւնը: Մարդը Աստուծոյ պատկերով է, մինչեւ իսկ իր մարմնին մէջ ձեւուած՝ «ծնելիք» Որդիին պատկերով: Տնտեսութիւնը մարդուն կամաց եւ աստիճանական բարձրացումն է եւ իր պատասխանատուութիւնը այս բարձրացման մէջ, դէպի Աստուծոյ հետ լիակատար նմանութիւն: Աստուածային դաստիարակութիւնը մարդը իր այցելութեան ընկալումին կը պատրաստէ, առանց գայն վախցնելու, գայն իր հետ ընկալումի եւ հաղորդութեան պատրաստելու համար:

ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱՂՈՒՍԱՐԸ

Քրիստոսի գալուստը, նախնական աստուածաբանութեան մէջ, բնաւ չէ կապուած մեղքին, այլ՝ «աշխարհի սկիզբէն կանխատեսուած է»: Մարդուն պատմութիւնը ձախողութիւններ կը ճանչնայ, մեղքը, որ, ինչպէս կ'ըսէին գնոստիկեանները, իր մարմնական բնութեան հետեւանքը չէ, այլ՝ իր ազատութեան, իր տկարութեան, իր հնազանդութեան պակասին: Ինչպէս երեխայ մը, մարդը կ'արթննայ քիչ առ քիչ եւ կը սորվի իր պարտականութիւնները: Մեղքը կրնայ հակառակիլ Աստուծոյ ծրագրին, բայց գայն չի կեցներ:

Պատմութիւնը կը ներկայանայ իբրեւ աստիճանական պատրաս-

տուրթիւն մը Որդիին գալուստին, որ «ամէն տեղ է Ս. Գիրքին մէջ, կը խօսի Աբրահամին, Մովսէսին, Դաւիթին հետ»: Աստուած կը պատրաստէր մարգարէները, որպէսզի անոնք մարդուն սորվեցնեն իր Հոգին կրել եւ հաղորդուիլ իրեն հետ: Իրենիոսի համար Յիսուս լուսաւոր կեդրոնն է, որմէ սկսեալ ժամանակի զիծը կը յստականայ: Ան մարդուն ստեղծման իբրեւ օրինակ ծառայեց: «Մարգեղութեամբ, Քրիստոս Աստուած կ'իջնէ մարդուն մէջ Հոգիով, եւ մարդը կը բարձրացնէ մինչեւ Աստուած, այսպէս իր մէջ իրագործելով իրմով ձեւուած գործը»:

Այս ձեւով Քրիստոս իր մէջ կ'ամփոփէ մարդոց երկար պատմութիւնը սկսելով առաջինէն՝ Ադամէն: Քրիստոսի խաչը, կեանքի ծառին իբրեւ պատասխան, կ'արտայայտէ միաժամանակ հնազանդութեան ողբերգութիւնը, մինչեւ իր մահը, փայտին վրայ բեւեռուած «վերջ տալու համար առհաւական անհնազանդութեան, բայց նաեւ նշելու համար, թէ իր չորս եզրերով՝ խաչը կը համբուրէ տիեզերքը» (Քարոզ. 34):

Հոգին եւ եկեղեցին

Քրիստոսի տնտեսութիւնը կ'աւարտի Հոգիի տնտեսութեամբ: Մեսիայէն սկսելով Հոգիին օծումը կը փայլատակէ ամբողջ եկեղեցական մարմնին վրայ, անոր անդամներէն ամէն մէկուն վրայ: Հոգին հոն կը մնայ եւ իր անուշահոտութեամբ գայն կը պարուրէ. «Հոն ուր Եկեղեցին է՝ հոն է Հոգին, հոն ուր Հոգին է՝ Եկեղեցին է»:

Հաւատքը, որ ցանուած է մեր մէջ, կ'առաջնորդէ սիրոյն եւ Աստուծոյ տնտեսութեան: Ս. Հաղորդութիւնը փրկչական պատմութեան վերջին հանգրուանն է: Հացը, գինին, հողի պտուղները, երբ կը սրբագործուին, ամբողջ տիեզերքը կ'առաջնորդեն դէպի Հայրը շարժումին: Անոնք փառաւորութիւն են եւ սպասում, ներկան եւ խոստումներու հասունացումը:

Այս պատկերով Իրենիոսը կը ցուցնէ Աստուծոյ ծրագրին միութիւնը եւ զարգացումը, երկու Կտակարաններուն իրար համապատասխանութիւնը, նաեւ երկու Ադամներու (առաջինը եւ Քրիստոս), երկու Եւանջելոս (առաջինը եւ Մարիամ), եւ ամբողջ ստեղծագործութեան ի մի բերումը (récapitulation):

ԹԱՄԱՐ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

ՄԻ ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Գերմանացի սակաւաթիւ պատմաբաններ միայն գիտէին Գրիգորիոս անունով մի հայ արքեպիսկոպոսի մասին, որն ապրել ու վախճանուել էր հարաւային Բաւարիայի Պասաու փոքրիկ քաղաքում: Այս տեղեկութեան իբրեւ աղբիւր ծառայում էր 1146 թ. Վինբէրգի վանքում վանահայր Գերհարդ Փոն Բեգէնբուրգի կողմից գրուած մի աշխատութիւն, որը կենսագրութիւնն է (Vita) գերմանացի մի նշանաւոր եւ հրաշագործ սրբի՝ Էնգելմարի, սպանուած 1100 թուականին: Այնտեղ ասուում է, թէ Ս. Էնգելմարի ուսուցիչն ու հոգեւոր դաստիարակն է եղել հայ պանդուխտ արքեպիսկոպոս՝ Գրիգորիոսը, մի սրբակենցաղ անձնաւորութիւն, որի վախճանման առթիւ, միջօրէին, տեղի է ունեցել արեւի մի երկարատեւ խաւարում:

Համարեա միեւնոյն ժամանակաշրջանում, 1080 թ., Զիգբուրգի վանքի վանականներից մէկի կողմից հին գերմաներէնով գրուած մի երկում, յայտնի որպէս Annolied կամ Rhythmus de S. Annoe Coloniensi Archiepiscopo, նշուում է, թէ բաւարացիների նախնիները Հայաստանից են եկել իրենց Բաւարոս նահապետի առաջնորդութեամբ:

Վերոյիշեալ տեղեկութիւնները, թէ՛ հայ արքեպիսկոպոսի եւ թէ՛ բաւարացիների ծագման մասին, թւում էին լինել անհիմն տեսութիւններ՝ ցոյց տալու համար Բաւարիայի բնակիչների հնութիւնը, որպէս Արարատից իջած Նոյ նահապետի անմիջական յետնորդներ:

Սակայն 1979 թ. Պասաու քաղաքի Նիդեռնբուրգ վանքում կատարուած վերանորոգութեան աշխատանքները երեւան հանեցին այն փաստը, որն եկաւ հաստատելու, թէ իրօք Բաւարիայում, ԺԱ դարում, հայեր են ապրել եւ հաւանաբար դրա համար էլ բաւարացիներին վերագրել են հայկական ծագում, մանաւանդ որ մարդաբանական տեսակէտից էլ նրանք որոշակի տարբերում են միւս գերմանացիներից:

Նիդեռնբուրգի վանքի Ս. Խաչ եկեղեցու հէնց կենտրոնում, պատահականօրէն յայտնաբերուեց մի քարէ դամբարան, ուր թաղուած էր մի եկեղեցական, քանի որ կմախքի կրծքավանդակի մօտ երեւում էր լանջախաչն ու աւելի ներքեւ՝ դօտու ճարմանդը:

Դամբարանում գտնուեցին նաեւ երկու կապարեայ սալիկներ, որոնց վրայի լատիներէն արձանագրութիւնը, թէեւ շատ էր վնասուած, սակայն անհրաժեշտ տեղեկութիւն էր տալիս հանգուցեալի ինքնութեան մասին: Համաձայն այդ գրութեան՝ այդ դամբարանում է հանգչում Գրիգորիոս արքեպիսկոպոսը՝ ազգութեամբ հայ (natione armenus), որն իր հայրենակիցների հետ (compatriotae) ապաստանել էր (structo asylo) Պասաու քաղաքում: Տեքստի միւս բառերը հնարաւոր չէզաւ վերա-

կանգնել կամ վերծանել:

Այդուհանդերձ, այդքանը բաւարար էր հաստատելու, որ աւանդաբար յիշուած Գրիգորիոս անուն հայ արքեպիսկոպոսը իրօք գոյութիւն է ունեցել, որ հայեր են ապաստան գտել Բաւարիայում, որ այդ արքեպիսկոպոսը իսկապէս մի բացառիկ անձնաւորութիւն է եղել, քանզի արժանացել է թաղուելու եկեղեցու կենտրոնում, մի պատիւ, որ չի տրուել նոյնիսկ նոյն եկեղեցում թաղուած երանելի Փիղելա վանամօր, որն այրին էր Հունգարիայի Ս. Ստեփան թաղաւորի եւ քոյրը՝ Հայնրիխ Բ կայսեր:

Հայ արքեպիսկոպոսը դէմքով նայում էր դէպի արեւելք: Քննելով նրա ոսկորները՝ Միւնխէնի մարդաբանական ինստիտուտը, ղեկավարութեամբ P. Schroterի, այն եզրակացութեան յանգեց, թէ նա մի յաղթանդամ եւ ուժեղ տղամարդ է եղել, բայց մահացել է 45 տարեկան երիտասարդ հասակում: Հին աւանդութեան համաձայն՝ նրա վախճանման թուականը նկատի է առնուել 1093 թ. սեպտեմբերի 23ը: Բաւարիայի աստղագիտական կենտրոնը հաստատեց այն իրողութիւնը, թէ այդ օրը, ժամը 11ին, իսկապէս էլ տեղի է ունեցել արեւի մի զօրաւոր խաւարում: (Այս բոլորի մասին ես իր ժամանակին մի համառօտ նկարագրութիւն հրատարակեցի «Էջմիածին» ամսագրում, 1982 թ., «Մի պանդուխտ հայ արքեպիսկոպոսի դամբարանը Բաւարիայիում» վերնագրով):

Ինչպէս յայտնի է, Բագրատունիների թագաւորութեան կործանումից յետոյ, բազմաթիւ հայեր, չգիմանալով սելջուքների բռնութիւններին ու հալածանքներին, ժԱ դարի երկրորդ տասնամեակներին սկսել են գաղթել իրենց հայրենիքից գլխաւոր երկու ուղղութեամբ՝ դէպի Կիլիկիա եւ դէպի Եւրոպա՝ յատկապէս Լեհաստան, Հունգարիա, Ռումինիա, Գերմանիա: Այդ գաղթականներից մէկն է եղել Պասաու քաղաքում հանգրուանած Գրիգորիոս արքեպիսկոպոսը, որն ընտրել է կամաւոր աղքատութիւնն ու ճգնաւորական կեանքը: Գերեզմանում յայտնաբերուած նրա մետաղեայ պարզ լանջախաչն ինքնին վկայում է նրա համեստութեան մասին, որին հետեւել է իր աշակերտը՝ Ս. Էնգելմարը՝ նոյնպէս ընտրելով ճգնաւորական կեանքի ուղին:

1982 թ. յունուարի 23ին, Պասաու քաղաքի եպիսկոպոս Անտոնիոս Հօֆմանի կողմից հրաւիրուել էի հայկական ծէսով կատարելու Գրիգորիոս արքեպիսկոպոսի մատուցների վերաթաղման արարողութիւնը:

Առաւօտ կանուխ գնացքը մոլեգին շաչիւնով սուրում էր Դանուբ գետի երկայնքով եւ ձիւնապատ դաշտերի միջով դէպի Պասաու: Պատուհանից երեւում էին մերձակայ աւանների համեստ, բայց գեղակառոյց շինութիւնները, ինքնատիպ ճարտարապետութեամբ աչքի ընկնող եկեղեցիներն ու սրբատեսիլ մատուռները: Հանգստաւէտ վագոնում նստած՝ մտածում էի այն մասին, որ դարեր առաջ իմ պանդուխտ ու թափառական հայրենակիցները անցել են այս նոյն վայրերով, եւ ոմանք

նոյնիսկ կայք են հաստատել այստեղ: Նրանք, վստահաբար, սպասել են յուսոյ դռների բացուելուն, որ վերադառնան իրենց հայրենիքը, բայց ի գո՛ւր, որովհետեւ Հայաստանում դեռ շարունակում էին իշխել անօրէնները՝ կեղեքելով, ճնշելով ու նուաստացնելով իրենց հպատակներին: Ամէն մարդ չէր կարող հանդուրժել այդ ահաւոր պայմանները, բայց հայրենիքից էլ զրկուած ապրել չէր լինի, օտարութեան մէջ նորահաս սերունդներն անպայման պիտի ձուլուէին, ինչպէս որ ցոյց տուեց Բաւարիայում հաստատուած այդ հայերի ապագան:

Բայց արի տես, որ լեզենդ դարձած մի հայ արքեպիսկոպոս, դարեր շարուակ անյայտ կամ առեղծուածային մնալուց յետոյ, դարձեալ լոյս աշխարհ պիտի դար, շատերին իր մասին խօսեցնել պիտի տար եւ իր շուրջը հաւաքէր բազմահազար օտար հաւատացեալներ, որոնք երախտագիտութեամբ գլուխ պիտի խոնարհէին նրա պանծալի յիշատակի առաջ:

Նիդեռնբուրգի վանքի Ս. Խաչ եկեղեցում, մօտաւորապէս 900 տարի յետոյ, նորից հնչեց հայոց լեզուն, նորից գտնուեց այդ լեզուով աղօթող մի հայ: Ներկաներն էլ խորհրդաւոր պահից ներշնչուած՝ աղօթում էին իրենց լեզուով հայ արքեպիսկոպոսի համար ու հայցում նրա օրհնութիւնը:

Արքեպիսկոպոսի մասունքները դրուեցին իրենց նախկին տեղում, եկեղեցու կենտրոնում, քարաշէն դամբարանին մէջ, որի վրայ գետեղուեց մարմարեայ քանդակազարդ մի նոր տապանաքար, որ կրում էր գերմաներէն մի արձանագրութիւն. «Աստ հանգչի Գրիգորիոս, արքեպիսկոպոս ի Հայաստան, ճգնաւոր ի Պասաու, Ուսուցիչ Ս. Էնգելմարի, վախճանուած 23 Սեպտեմբեր 1093»:

Ուշադրութիւնս գրաւեց «ուսուցիչ» բառը: Արդարեւ հայ արքեպիսկոպոսի համար չէր կարող լինել աւելի մեծ յարգանք ու պատիւ, քան այն, որ նրան, նոյնիսկ իր վախճանումից դարեր յետոյ, շարունակէին ընդունել իբրեւ բարի ուսուցիչ: Իսկ մեզ՝ հայերիս համար էլ դա մի պարծանք էր եւ ազգային արդար հպարտութեան առիթ, քանի որ այդ բարձրաստիճան եկեղեցականը, որպէս առաքինազարդ մի անձնաւորութիւն, իր կեանքի սեփական օրինակով հմայել էր իր շրջապատը եւ նուիրուել ուրիշների դաստիարակման ազնուագոյն գործին:

Նա այդ օտար երկրում բարձր էր պահել իր եկեղեցականի կոչումը: Ես ինձ բախտաւոր էի զգում՝ կատարելով նրա սրբանանայ նշխարների վերաթաղման արարողութիւնը, միաժամանակ հայցում էի նրա բարերար միջնորդութիւնը Տէր Յիսուսի մօտ, որպէսզի ես էլ կարողանամ յաջողութիւն գտնել իմ կեանքում՝ համարձակ վարդապետելու Աւետարանի ճշմարտութիւնը եւ այդպիսով իմ համեստ մասնակցութիւնը բերելու իմ ազգի սիրասուն զաւակների հոգեւոր դաստիարակման նուիրական աշխատանքին:

Արդարեւ, մի երկրի հզօրութիւնը կախում ունի իր բնակիչների դաստիարակութեան մակարդակից: Միայն առողջ դաստիարակութեամբ հնարաւոր է կանխել բռնութիւնը, անհանդուրժողականութիւնը, մոլե-
ւանդութիւնը, անձնասիրութիւնը, թշուառութիւնը եւ ուրիշ շատ հա-
սարակական աղէտներ: Այսօր, աւելի քան երբեք, մենք կարիք ունենք իրենց կոչումին գիտակից դաստիարակների, որոնց համար հոյակապ օրինակ կարող են ծառայել վերոյիշեալ հայ արքեպիսկոպոսի նման բազմաթիւ այլ երախտաւորների կեանքը:

ՅԱԿՈՒ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ



Հայ արքեպիսկոպոսի լանջախաչը

ԽՈՐԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԲԱՐՈՅԵԱՆԻ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՕԾՈՒՄԸ

Երջանկայիշատակ Զարեհ Ա. Կաթողիկոսի վախճանումէն քանի մը ամիս ետք, Մարտ 5ին տեղի ունեցաւ կաթողիկոսական ընտրութիւն: 84 պատգամաւորներու վրայ 83 քուէներով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ընտրուեցաւ Խորէն Արք. Բարոյեան:

Խորէն Ա. Կաթողիկոս Բարոյեան իր ողջոյնի եւ սիրոյ առաջին խօսքը ուղղեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին սա բառերով.

«Իմ եղբայրական սիրոյ եւ քրիստոնէական ողջոյնի առաջին խօսքը կ'ուղղեմ նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ անոր Վեհափառ Գահակալի՝ Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին, մաղթելով իրեն երջանիկ եւ քաջաւոյժ կեանք, ցանկանալով, որ իր բոլոր ճիգերն ու ջանքերը արգասաւորուին եւ պողաբերուին, ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ եւ Ս. Էջմիածնի»:

Խորէն Ա. Բարոյեանի կաթողիկոսական օծումը տեղի ունեցաւ Մայիս 12ին, շատ մեծ շուքով՝ պետական, ազգային եւ միջազգային հրաւիրեալներու ներկայութեան:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԶՈՅԳ ԱԹՈՒՆԵՐՈՒ ՄԻՋԵԻ ՍԵՐՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Երուսաղէմի Հայոց ամենապատիւ պատրիարք Եղիշէ Արք. Տէր-տէրեանի կարգադրութեամբ եւ հրաւերով 1963 թուի Հոկտեմբեր 23ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոս հասաւ Երուսաղէմի Հայոց պատրիարքարանը:

Սրբազան պատրիարքի հրաւերով եւ Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսի ալ բաղձանքով Երուսաղէմ ժամանեց նաեւ Կիլիկիոյ նորընտիր եւ նորած Խորէն Ա. Կաթողիկոս Բարոյեանը:

Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մայր տաճարին մէջ երկու կաթողիկոսները եղբայրական սիրով ողջագուրուեցան:

Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոս շնորհաւորեց ընտրութիւնն ու օծումը Խորէն Ա. Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ:

Խորէն Ա. Վեհափառ յարգալիբ արտայայտութեամբ շնորհակալութիւններ յայտնեց «երէց եղբայր Վազգէն Ա. Վեհափառ Կաթողիկոսին Ամենայն Հայոց»:

Ս. Յակոբեանց Մայր տաճարին մէջ տեղի ունեցաւ նաեւ հոգեհանգստեան պաշտօն՝ երջանկայիշատակ Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսի հոգւոյն համար, զոյգ հայրապետներու մասնակցութեամբ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Կիլիկիոյ Ս. Աթոռի երկու կաթողի-

կոսներու միջեւ վերահաստատուեցաւ համերաշխութիւն:

Յիշել պարտինք սակայն, որ Ամերիկայի մէջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատկան թեմերէն ներս կային Ս. Էջմիածնի թեմերէն անջատեալ շարք մը հայ եկեղեցիներ, որոնք կապ չէին պահեր թեմական առաջնորդարաններու եւ Ս. Էջմիածնի հետ: Զարեհ Ա. Կաթողիկոսի ընտրութենէն ետք, երբ որ գոյգ կաթողիկոսարաններու համերաշխ յարաբերութիւնները դադրեցան, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ստանձնեց այս անջատեալ հայ եկեղեցիներու հովանաւորութիւնը:

1963 թուի Հոկտեմբեր 26ին Երուսաղէմի մէջ գոյգ կաթողիկոսներու ողջագուրումէն եւ համերաշխութեան վերահաստատուելէն ետք, սպասելի էր, որ Կիլիկիոյ կաթողիկոսարանը Ս. Էջմիածնի թեմերուն վերադարձնէր այդ նախկին անջատեալ բոլոր եկեղեցիները Ամերիկայի մէջ եւ վերահաստատէր եկեղեցւոյ միութիւնը:

Դժբախտաբար տեղի չունեցաւ այդ ի մեծ յուսախաբուութիւն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

1973 թուին սակայն Խորէն Ա. Կաթողիկոս ի սրտէ փափաքեցաւ եւ ամէն ջանք ի գործ դրաւ իրագործելու այդ միութիւնը եւ Ս. Էջմիածնի թեմերուն վերադարձնելու Կիլիկիոյ Կաթողիկոսարանէն հովանաւորեալ այդ բոլոր եկեղեցիները:

Դժբախտաբար սակայն արտաեկեղեցական ազդեցութիւններ թոյլ չտուին եւ արգելք եղան, որպէսզի չիրագործուի Հայաստանեայց Եկեղեցւոյ այդ շատ բաղձալի միութիւնը Ամերիկայի մէջ եւ այլուր:

ԽՈՐԷՆ Ա. ՎԵՀԱՓԱՌ ԲԱՐՈՅԵԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԾԻՆԱՐԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

1963 թուէն մինչեւ 1983 տարեթիւր, շուրջ քսան տարի տեւեց Խորէն Ա. Վեհափառի հայրապետական պաշտօնավարութիւնը: Այս քսան տարիներուն ընթացքին Խորէն Ա. Կաթողիկոս Անթիլիասի Կաթողիկոսարանին, դպրեւանքին, թեմերուն, եկեղեցւոյ կառուցման, նոր դպրոցներու հիմնադրման համար կատարած ծառայութիւններով արդարօրէն հանդիսացաւ մեծագոյն շինարար կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիոյ:

Առաջին առիթով ան ընդարձակեց Անթիլիասի Կաթողիկոսարանի հողատարածքը: Հոն կառուցանել տուաւ Զարեհեան յուշարձան դամբարանը: Կաթողիկոսարանը օժտեց նոր վեհարանով: Վանքի շրջափակին մէջ շինել տուաւ եպիսկոպոսարանի շէնքը:

Անթիլիասի վանքին մէջ Մարտիկեան (նախկին Մեսրոպեան) վարժարանը շինել տուաւ Անթիլիասի եւ շրջակայքի հայ բնակիչներու գաւակներուն համար, որպէս ամէնօրեայ արդիական դպրոց:

Պիքֆայայի կաթողիկոսարանի հողատարածքը տասնապատիկ ընդարձակեց: Հոն շինել տուաւ եկեղեցի եւ դպրեւանք: Նոյն հողատարածքին վրայ ան կառուցանել տուաւ Մեծ Եղեռնի Հայ Նահատակաց

Յիշատակի կոթողական յուշարձանը:

Պէյրութի մէջ շինել տուաւ հայկական երկու գոլէճներ՝ Խանամիրեան եւ Սոֆիա Յակոբեան: Շինել տուաւ նաեւ այլ դպրոցներ եւ եկեղեցիներ:

Կիլիկիոյ կաթողիկոսարանի համար գնեց երկրորդ եկամտաբեր «Զարեհեան» կալուածը:

Պէյրութ քաղաքի Տորա արուարձանի մէջ գնեց ընդարձակ հողատարածք: Հոն շինել տուաւ բնակարաններ՝ հայ տարեցներու գործածութեան համար:

Լիբանանի ծովափնեայ շրջանի Ճիպէյլ գիւղաքաղաքի մէջ ընդարձակ հողատարածքին վրայ կառուցուած բնակատեղիներու յարմարութիւններով կար դանիացիներու պատկան Հայ որբանոց մը:

Խորէն Ա. Վեհափառ գնաց մինչեւ Տանիմարքա, տեսնուեցաւ որբանոցի կալուածատէրերուն հետ եւ յաջողեցաւ այդ շատ կարելոր կալուածի սեփականատէր դարձնել Կիլիկիոյ Կաթողիկոսարանը:

ԵԿԵՂԵՑԻՒՆ ԵՒ ԱԶԳԻՆ ԸԾՄԱՐԻՏ ՆՈՒԻՐԵԱԼԸ

Խորէն Ա. Կաթողիկոս Բարոյեանը, որպէս Կաթողիկոս եւ հոգեւորական, միշտ եւ միայն Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ հայ ազգին ՄԱՌԱՅԵԼՈՒ նշանաբանն է, որ ընտրեց:

Իր նշանաբանն էր նոր եկեղեցիներ հիմնել եւ կառուցել, իր նշանաբանն էր հայ կրթական օճախներ կառուցանել:

Կիլիկիոյ Կաթողիկոսարանի եւ դպրեմանքի բարգաւաճիլն էր նաեւ իր գլխաւոր իղձը:

Խորէն Ա. Վեհափառ ունէր ձիրքը եւ հմայքը բարերարներ գտնելու: Իրն էր փառքն ու պատիւը, որով գտաւ բարերարներ, որոնք նեցուկ կեցան վերոնշեալ իր բոլոր շինարարութիւններուն:

Այս բոլորը ըրաւ յանուն օգտին եւ բարօրութեան հայ եկեղեցւոյ եւ հայ ազգին:

Անձնական ոչ մէկ շահ փնտռեց: Աջով կը ստանար եւ ձախով կը բաժնէր ան: Աւելի քան քառասուն տարիներու ընթացքին միայն 3500 տողարի ինչայողութիւն մը ունէր ան: Այդ գումարը կը պահէր ան իր թաղման համար:

— Չեմ ուզեր, որ ազգը կատարէ իմ թաղումս, — կ'ըսէր:

Իր հոգիի միակ երանելիութիւնը ծառայելն էր ազգին եւ եկեղեցիին: Իր երանութիւնն էր ԲԱՐԻՔ ՍՓՈՒԵԼԸ:

Այնպէս՝ ինչպէս պիտի ըսէր բանաստեղծ Միսաք Մեծարենց...

— «Անանձնական ուրախութիւնն» էր իր «ուրախութիւնը»:

«Տուր ինձի, Տէր, ուրախութիւնն անանձնական»:

ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ
«Մեծերու հետ եւ մեծեր»

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ` ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՆՈՐԱԳՈՅՆ «ԶՈՀ»Ը

Երիտասարդութեան վերաբերող հարցերը մարդկային ընկերութեան միայն մէկ հատուածին, կամ աշխարհի տարբեր կրօնքներէն մէկուն կամ մի քանիին չեն վերաբերիր: Անոնք համայն աշխարհին պատկանող ու համայն մարդկութիւնը յուզող իրական հարցեր են:

Անցեալին, կլիմայական տարբեր երկիրներու պայմաններուն բերումով, տարբեր ցամաքամասերու վրայ ապրող մանուկներ, իրարմէ տարբեր տարիքի մէջ չափահասութեան շրջան կը թեւակոխէին: Այլ խօսքով պատանութիւնէ երիտասարդութիւն անցումային տարիքը, տարբեր երկիրներու ու ազգութիւններու մէջ կը տարբերէր իրարմէ: Ոմանք կանուխ կը հասունանային, ուրիշ երկիրներու մէջ ապրողներ՝ ուշ, նայած տուեալ երկրին կլիմայական պայմաններուն, որոնք կը դիւրացնէին կամ կը դժուարացնէին մարդու բնախօսական հասունացումը, ինչպէս կը փաստեն մարդակազմութեան մասնագէտներ ու ընկերաբաններ:

Բնագիտական այս խոչընդոտը որոշ չափով վերցուած է ներկայիս: Կլիմայական տարբերութիւնը եւս տեղի տուած է արհեստագիտութեան (technology) դիմաց, երբ դպրոցներէն ներս հասակ առնող պատանիներուն ու պարմանուհիներուն տրուելիք դաստիարակութիւնը կը կանխուի արդէն, արհեստագիտութեան միջոցաւ: Անիկա դարձած է ինքնանշանակ «ուսուցիչ», որ անվճար կը մտնէ ամէն տունէ ներս, եւ համբերութեամբ ու սիրով «կը հետեւի» մեր մանուկներուն դաստիարակութեան: Կազմաւորում մը սակայն, որ ո՛չ կրօնական սկզբունքներու տեսակէտները նկատի կ'ունենայ, ո՛չ ալ աւանդականօրէն ընկալեալ կրթական հաստատութիւններու փորձագէտներուն կազմած կանոնադրութիւնները:

Այսօր, երբ երիտասարդութեան հետ առնչուող գրեթէ ամէն հարցերուն «տազնապի շապիկ»ը կը հագցնենք, չէ՛ք կընար յայտարարել, ըսելով թէ՛՝ նախորդ դարերուն, կամ անցնող ժամանակաշրջանին ապրած երիտասարդութիւնը նման հարցեր չէ՛ ունեցած: Ատիկա պարզապէս անհեթեթութիւն պիտի ըլլար: Բայց ինչո՞ւ այսօր, ներկա՛յ ժամանակներուն մտահոգիչ տազնապի կը վերածենք այդ հարցերը: Դարձեալ, ճիշդ պիտի չըլլա՛ր ըսել, թէ անցեալին այդ հարցերը տազնապ չէին յառաջացներ: Վստահաբար մարդիկ եղած են, որոնք տազնապած են նման երեւոյթներու դիմաց: Սակայն անոնց արտայայտած տազնապը տեղական բնոյթ ունենալով, կամ տուեալ գիւղին կամ քաղաքին մէջ սահմանափակուելով, անուղղակիօրէն իր լուծումը կը գտնէր եւ տազնապը այդ ձեւով վերացած կ'ըլլար:

Օրինակներով խօսինք, աւելի հաղորդական ըլլալու համար:

Ա. Այսօր զգացուող տազնապաներէն մէկը՝ ամուսնութիւնն է, որուն հետ առնչուած բոլոր հարցերը ամէնօրեայ դրութեամբ մեր դիմաց կան, սկսեալ բնակարանային դժուարութիւններէն, եւ հասնելով մէկ տունի մէջ բազմանդամ ապրելու պատճառաւ ստեղծուած անհաճոյ իրավիճակները, դրամը տնտեսել չկարենալու հետեւանքով յառաջ եկած խնդիրները, զաւակներու ծնունդին, սնունդին եւ կրթութեան յարցերու մասին վերաբերող հարցերը, սեռային կեանքի բազմաբեւեռ հոգեբանական վիճակները, մինչեւ հազուստ կապուստի առնչուող անտեղի խնդիրները, որոնք երբեմն «մէկ ծրարի մէջ» լեցուած կ'ըլլան:

Վերոյիշեալ հարցերուն մէջ, մեր ուշադրութիւնը եթէ կեդրոնացնենք ամուսնութեան բարոյական երեսին, պիտի տեսնենք որ ամուսնութեան տարիքի յետաձգումէն յառաջացած են, ներկայիս տազնապարմարուող շարք մը երեւոյթներ:

Ընտանեկան ներքին անհանդուրժողականութեան հետեւանքով, նոյն տան մէջ ապրիլ չկարենալու, կամ մէկէ աւելի ընտանիքներով միեւնոյն հօրենական տան մէջ խճողեալ կեանքով ապրիլ չուզելու ձգտումը մէկ կողմէ, իսկ միւս կողմէ՝ համաշխարհային տնտեսական տազնապարմար, երիտասարդութեան մեծ մասին ամուսնանալու թրուականը յետաձգեցին: Այս յետաձգումին մէջ կը մտնեն նախամուսնական սեռային յարաբերութիւնները, աղջիկներու կուսական պատիւին ու անոր տրուած արժէքին հետ առնչուած ըմբռնումները տարբեր ազգերու եւ մշակոյթներու մօտ, ինչպէս նաեւ ուշ ամուսնութիւններու հետեւանքով անզաւակութեան, զաւակներու որդեգրման, փոխանորդաբար մայրութիւն կատարող երիտասարդ աղջիկներու (surrogate motherhood), վիժումի (abortion) եւ սերմնաբուծութեան հետ կապ ունեցող բոլոր տեսակի բարոյական հարցերը, որոնցմէ շատեր տակաւին կրօններուն տալիք պատասխաններուն կը սպասեն:

Քիչ առաջ ըսի, թէ անցեալին ալ տազնապաներ կային: Ընդհէ է, բնականաբար ծնողներ զգուշաւորութեամբ կը հետեւէին իրենց նորաբողոք զաւակներու երիտասարդական անման ընթացքին: Այսօր որեւէ ծնողքի եթէ հարցնէք, թէ ի՞նչ կը փափաքի իր զաւակներուն համար, գրեթէ անխտիր, բոլորն ալ պիտի ըսեն որ զանոնք կ'ուզեն ամուսնացնել, տեսնել անոնց երեխաները, եւ ուրախանալ անոնց ապրած երջանկութեամբ: Այս փափաքը կամ զգացումը հինէն կուգայ, որ իր մէջ ունի բարոյական մաքրութեան օրէնքը: Հին սերունդի ծնողներ, շուտով կ'ամուսնացնէին իրենց զաւակները, մինչեւ իսկ, երբեմն տարօրինակ կերպով՝ իրենց զաւակներուն կամքին հակառակ, իրենց ընտրած ու յարմար դատած անձներուն «կու տային» զանոնք, տնտեսական, բարեկամական ինչ-ինչ դաշինքներով ու համաձայնութիւններով: Մինչեւ այսօր մնացած է անոր հետքը, դրամօժիտի կամ պարզապէս օժիտի ձե-

ւին տակ: Բնականաբար այս պարագային «զոհեր» պէտք է նկատել այդ նորափթիթ երիտասարդներն ու երիտասարդուհիները, որոնք սիրոյ տարբեր երազներով թերեւս օրօրած կ'ըլլային իրենց կանուխ երիտասարդութեան տարիները: Սակայն, այդ ձեւը որդեգրուած էր, կանխարգիլելու համար բարոյական սայթաքումները: Կասկած չկայ, որ հակառակ կանխարգիլման այդ մեթոտին, հետագային, կեանքի ընթացքին դարձեալ կ'արձանագրուէին սայթաքումներ, որոնք վերջ կը գտնէին երբեմն եղերական միջադէպերով:

Ներկայ ժամանակներուն, կրօններուն դերակատարութեան կարեւոր բնագաւառներէն մէկը պէտք է դառնայ Ամօթի զգացումին աճեցումն ու կրթութիւնը մարդուն մէջ, որ աստուածավախութեամբ կը սկսի, եւ մարդու բարոյական կեանքին զսպանակը կրնայ դառնալ: Ազատ ընկերութեան բերած մեծագոյն վնասներէն մէկը եղաւ՝ ամօթի զգացումին բթացումը մարդուն մէջ:

Բ. Գլխաւոր օրինակներուն երկրորդը կարելի է քաղել Ուսման ու Կրթութեան բնագաւառէն: Կատարուած հարցախոյզի ճամբով հաստատուած է, թէ այսօր, համայն աշխարհի մէջ, մօտաւորապէս 113 միլիոն մանուկներ, մեծաւ մասամբ աղջիկներ, դպրոց չեն յաճախեր, այսինքն՝ ուսում ու կրթութիւն չեն ստանար: Անոնց 100 միլիոնը նոր զարգացող երկիրներու մէջ կը գտնուին: Տղոց պարագային մէկ մասը բանուոր կը դառնայ, մէկ մասը մանր գործերով իր ստամոքսը կը լեցնէ, մէկ մասը մուրացկանութեամբ կը սնանի, իսկ վերջին մաս մըն ալ փողոցներուն անտունիներու դասակարգը կը կազմէ, նիւթ հայթայթելով մարդավաճառներու, մարմնի օրկաններ վաճառողներու եւ անասնական կրքերու ախորժակով մոլի անձերու, որոնց համար մարդը Աստուծոյ ստեղծագործութիւնը չէ, այլ՝ օգտագործման առարկայ պարզապէս: Գալով աղջիկներուն, որբութեան ու աղքատութեան հետեւանքով դպրոցէն դուրս մնացածներուն մեծ մասը իր երիտասարդական խանդը կը դնէ մարմնավաճառութեան մահիճներուն վրայ, ուր եւ կը խորտակուին անոնց ապագայի բոլոր երազներն ու ընկերութեան կեանքին մէջ առաքինի մայր դառնալու հեռանկարները:

Պէտք է անվարան յայտարարել, թէ՛ Աղբատութիւնը մեծագոյն թշնամին է դպրոցին: Այսօրուան դպրոցէն դուրս մնացած մանուկները, վաղուան լուսանցքայնացած երիտասարդութիւնը պիտի կազմեն, ուր թաքնուած են արմատները ե՛ւ թմբամոլութեան, եւ ալքոլամոլութեան ու բարոյական այլազան սայթաքումներուն, ինչպէս նաեւ սեռային սանձարձակութեանց՝ հակասեռ, միասեռ ու այլեւայլ տարբերակներով:

«Ուսումը՝ ամէնո՛րն» խորագիրը, աշխարհի կրօններուն կատարելիք գոհութիւններուն գլխաւորը պէտք է դառնայ, անոնց ընկերային ծառայութեան սահմանումներէն ու ժողովական օրակարգերէն գործնապէս դուրս գալով: Ի՞նչ բանի օգտակար է հասարակաց ուսումը: Անիկա

նախ կը ծառայէ՝ իրարու հաւասարեցնելու համայն աշխարհի երիտասարդութիւնը, եւ երկրորդ՝ կը կանխարգելէ, փողո՛ցը իբրեւ տուն ընդունող երիտասարդութեան աններելի որոշումը: Ուսումը պատկանելիութիւն կուտայ երիտասարդին: Ան կը զգայ որ կը պատկանի այս աշխարհին, որ իր տունն է, եւ պարտաւորութիւն ունի անոր նկատմամբ: Երկրորդ՝ պատկանելիութիւն կը զգայ իր ընտանիքին համար: Եւ երրորդ, թէ՛ կը պատկանի սերունդի մը, հաւաքականութեան մը՝ ընկերութեան երիտասարդական խաւին, որ կոչուած է աշխարհի ապագան տնօրինելու իր ներդրումով:

Այս իմաստով, ուսումը անհրաժեշտ գործիք կը դառնայ երիտասարդութեան միջեւ իրարհասկացողութեան, ուրիշ խօսքով՝ գիրար հասկնալու լեզու կը դառնայ անիկա: Ուսումը այնպիսի մտահորիզոն կը պարզեւէ երիտասարդին, որուն մէջ տեղ մը անպայման ինքզինք կը տեսնէ իր կատարելիք ներդրումով: Երբ բոլորին ալ ուսման հնարաւորութիւն տրուի, նոր սերունդը կը հաւասարի իրարու, նոյնիսկ եթէ մէկը հարուստ ըլլայ, միւսը աղքատ, մէկը այս կրօնքին պատկանի եւ միւսը՝ այն, անոնք անպայման հաւասարութեան գետին կ'ունենան, ուր դէմ դիմաց կը նստին, ու գիրար կը հասկնան:

Ձի՛ բաւեր միայն կրօններուն կողմէ դպրոցներուն ընծայուած նիւթական հովանաւորութիւնը: Սա պետութիւններն ալ կրնան կատարել, եթէ տնտեսապէս աւելի զօրաւոր հիմերու վրայ զգան, եւ փաստօրէն կա՛ն այդպիսի պետութիւններ: Կրօններուն դերակատարութիւնը բոլոր դպրոցներուն մէջ Կրօնական Դաստիարակութեան ջամբերուն մէջ կը կայանայ, կանխարգելիչու համար ամէն ձգտում, որ Աստուծոյ պատուիրաններէն կը հեռացնէ երիտասարդութիւնը, որ անգիտակցաբար այս աշխարհը կը դարձնէ անշնչելի միջավայր մը: Կրօնական դաստիարակութիւնը կը զսպանակէ կիրքերը, նոյնիսկ թմրախտերու որոշ տեսակներուն (Marijuana) կարգ մը երկիրներու կողմէ օրինականացման դիմաց՝ կը կողմնորոշէ գիտակից երիտասարդութիւնը, կը շեշտէ առողջ ընտանիքի ըմբռնումը եւ կը նուազեցնէ տունէն հեռացումի ու գաղթի երեւոյթները, նոյնիսկ անգործութեան մէջ կը հակադէմնէ գողութեան երկարող երիտասարդ ձեռքերուն գործունէութիւնը, մինչեւ իսկ անթէլ ինթերնէթային կապերէն գաղտնաբար օգտուելու պարագային, գողութեան զգացումը կը դնէ երիտասարդին հոգիին մէջ...:

Նոր սերունդի դաստիարակութեան ճամբուն վրայ, իբրեւ եկող սերունդներու բարոյական սայթաքումներու կանխարգելիման միջոց, կրօններու հիմնական առաքելութիւններէն մէկը պէտք է ըլլայ նաեւ Մեղուներու յատուկ դաստիարակութեան ծրագիրներու մշակումը ու անոր դրութեանական գործադրութիւնը համայնքներու կեանքին մէջ, նոյնիսկ երբեմն աշխատանքային փոքր խումբերով (workshop):

Կրօնական դաստիարակութիւն տեսած ծնողքն է միայն որ կրնայ իր ծնած զաւակներուն հոգիին մէջ հաւատք կառուցել: Սա սերունդէ սերունդ փոխանցուող աւանդ է, որուն ժառանգական յաջորդականութիւնը խզելը իսկապէս մեղք կը համարուի, ու մեծ կորուստ պէտք է նկատել նոր սերունդներուն հաշւոյն: Ընտանիքի իւրաքանչիւր ծերացող անդամ, այդ աւանդապահ անձը պէտք է զգայ ինքզինք, ու պարտականութիւն համարէ իրեն յանձնուած հաւատքի աւանդը փոխանցել յաջորդ սերունդներուն: Կրօններուն պարտականութիւնն է այս պարագային, ծնողախրուօքեան ու յարգանքի դաստիարակութիւնը կանուխ տարիքէն ներարկել մանուկներուն հոգիին մէջ, առողջ մարդկային ընկերութեան իբրեւ զօրաւոր երկու հիմերը: Դժբախտաբար հաղորդակցութեան բոլոր տեսակները (media) իրենց նիւթերով ու փոխանցած տեղեկութիւններով, կրօններուն ուսուցած վերոյիշեալ բարոյական օրէնքներուն հակառակ դաստիարակութիւնը կը ներկայացնեն: Իսկ երիտասարդութիւնը բնա՛ւ տրամադիր չէ աւանդականը պահպանելու, այլ միշտ նորաձեւութեան ոգիով սողորուած, փոփոխութեան հետամուտ է:

Վերջապէս, սակայն առաջնահերթութեան իմաստով վերջինը չէ՝ Աղօթքը: Աղօթքին դերակատարութիւնը անպայման իր բարերար ազդեցութիւնը կ'ունենայ տառապող հոգիներուն վրայ: Ինչքա՛ն լաւ պիտի զգայիր, եթէ քեզ վիրահատող բժիշկը, վիրահատութենէդ անմիջապէս առաջ, ձեռքդ բռնած աղօթէր քեզի հետ...: Հոգեկան այն ոյժը որ այդ պահուն պիտի զգաս, վիրահատութենէդ վերջ ապաքինումիդ արագ ընթացքին վրայ վստահաբար պիտի ազդէ: Վերջապէս մենք Ֆիզիքական ըլլալով հանդերձ, հոգեղէն իրականութիւն մը ունինք մեր ներսի-զին, որ իր զօրեղ ազդեցութիւնը կ'ունենայ մեր Ֆիզիքականին վրայ:

Տակաւին, փաստացի իրողութիւն է, որ թմրամոլներու կազդուրման կեդրոններուն մէջ, աղօթքին դերակատարութիւնը կենսական է այնքան, որքան զանոնք տեւապէս զբաղ պահելու համար տրուած յարատեւ աշխատանքը: «Բարի աշխատանքը աղօթք է», ըսուած է: Այս պարագային նաեւ անկեղծ աղօթքը բարի աշխատանք կը համարուի, որովհետեւ նախկին թմրամոլը կը մղէ Աստուծոյ հետ խօսելու, եւ իր սխալները որդիաբար Անոր խոստովանելու «աշխատանք»ին:

Գ. Երրորդ գլխաւոր կալուածը, որուն մէջ այսօրուան տագնապները իրենց արմատներէն շատերը ունին՝ Անգործութիւնն է: Անգործութիւնը իրաւամբ ներկայ ժամանակներու «հրէշ»ը նկատուած է: Անոր հետեւանքներուն մէջ ընկերային կեանքի բազմաթիւ դժբախտութիւններ կարելի է թուել, եթէ ոչ բոլորը: Ամուսնալուծումնե՞ր տեղի չեն ունենար անոր հետեւանքով, թմրամոլութեա՞ն չեն յանձնուիր երիտասարդներ անոր հետեւանքով, պոռնկութեան ճամբո՞ւն չեն առաջնորդուիր տակաւին կեանքին նոր բացուած երիտասարդահիներ՝ շլանալով դրամի առատ հոսքէն: Տակաւին, անգործութիւնը պատճառ կը դառնայ

նույնիսկ մտային խանգարման, որմէ դուրս գալու միջոց իբրեւ, յաճախ աւելի վատ այլընտրանք կը դառնայ թմրամոլութիւնը: Իսկ անգործութեան կատարած «գործերուն», այսինքն անոր հետեւանքներուն գլուխ գործոցը՝ մարդը յուսահատեցնելէ ետք անձնասպանութեան մղելն է: Արարք մը՝ որ չարգարանար կրօնական ըմբռնումով:

Լսուած խօսք է, թէ «երիտասարդութիւնը մեր ապագան է»: Քաղաքակիրթ աշխարհին համար այս արտայայտութիւնը «Հինցած» խօսք է այլեւս: Երիտասարդութիւնը վաղուան պիտի չսպասէ աշխատելու համար: Այդպիսի երկրին ու ժողովուրդին կեանքը Հինցած ու մաշած պէտք է նկատել: Երիտասարդութիւնն է աւել Ներարկողը աշխարհի ներկայ կեանքին: Ուստի երիտասարդութիւնը «սպասման սենեակին մէջ» պահելը խոհեմութիւն չէ, ինչպէս կը նկատեն զանոնք կարգ մը երկիրներ: Իր երկրի երիտասարդութիւնը «սպասման սենեակի սերունդ» նկատող երկիրներուն մէջ տեսնուած է, որ չորսի վրայ միայն մէկ երիտասարդ գործ ունի, մնացեալ երեքը անգործ են, եւ որու հետեւանքով գրեթէ մեծ մասամբ՝ բարոյական սայթաքումներու հակամէտ:

Դարձեալ, անգործութիւնն է պատճառը, որ ընկերութեան կեանքին մէջ նոր դասակարգ մը կազմուած է՝ հայրով ու մայրով որբերու: Որբութիւնը ծնողագուրկ երեխաներու տրուած անուն էր: Իսկ ներկայիս անգործութեան հետեւանքով բաժնուած ընտանիքներու զաւակներ, աւելի՛ դժբախտ որբեր պէտք է նկատել, քան՝ ծնողագուրկները: Տակաւին, անծանօթ հօր միջոցաւ՝ դիպուածի բերմամբ ծնունդ առած երեխաները, որոնք միայնակ մօր մը (single mother) խնամքին յանձնուած են, դարձեալ վերոյիշեալ որբերու դասակարգին կը պատկանին, որոնց ապրած դժբախտութիւնը կը կրկնապատկուի, երբ առանձին ապրող մայրը եւս անգործութեան կը մատնուի:

Իրենց աստուածաբանական ըմբռնումներէն ու երկնային հաւատալիքներէն բացի, երբ աշխարհի բոլոր կրօնները բարոյագիտական ամուր հիմերու վրայ հաստատուած են, իրենց դերը ուսուցողականէ քիչ մը աւելի անդին պէտք է անցնի եւ ընկերային կեանքի առողջութիւնը հաշուի առնելով, երիտասարդութեան գործ հայթայթելու ծրագիրներ մշակեն: Այս պարագային, կրօնները կոյր հետեորդներ պիտի չունենան, այլ՝ գիտակից, եւ իր կրօնքին բարիքը վայելող հաւատարի՛մ հաւատացեալներ: Զուր տեղը չէ, որ կարգ մը կազմակերպութիւններ, իրենց անդամները գործի միջոցաւ մնայուն կախումնաւորութեան մէջ կը պահեն, օրէ օր խտացնելով իրենց հետեւողներուն շարքերը:

Համայն աշխարհի երիտասարդութիւնը զբաղ պահելու լաւագոյն միջոցը գործի հայթայթումն է հետեւաբար, որուն մէջ ամէն ժամանակէ աւելի այսօր, պէտք է կրօններ միասնաբար գործեն: Ահա աշխատանքային գործնական դաշտ կրօններուն համար, հեռու իրենց աստուածաբանական տարբեր ըմբռնումներէն, հաւատալիքներէն ու այլազանութենէն,

որոնք կրնան հեռացնել զանոնք իրարմէ: Իսկ երիտասարդութեան գործ հայթայթելու ցանկութիւնը, ո՛չ միայն իրարու պիտի մօտեցնէ կրօնները, այլ գործակից պիտի դարձնէ, սկսելով այս բնագաւառէն:

Վերջապէս, որ ներկայ իրավիճակը ո՛չ միայն գոհացուցիչ, այլ յուսադրիչ չէ՛: Երիտասարդութեան կեանքի երբեմն տարօրինակութիւնները՝ հագուածքի, մագի անբնական սանտրուածքներու, աղմկածայն երաժշտութեան, ու բարոյական բազմաձև խնդիրներուն, ես կը նկատեմ պոռթկում մը, որ բարեբախտաբար տակաւին կարելի՛ է զսպել: Կրօններուն վերապահուած երկնային դերն է՝ իրենց տրուած բարձր հեղինակութեամբ հաւասարակշռել նոր սերունդը, ազատելով զայն ընկերային կեանքի «գոհ» դառնալու մօտալուտ վտանգէն:

Կրօնները իրենց բարոյական բոլոր ուսուցումները գործնականօրէն իրագործած կ'ըլլան, եթէ իրենց երիտասարդ զաւակներուն ապահովեն՝

- ա. Լաւ դաստիարակութիւն,
- բ. Լաւ աշխատանք եւ
- գ. Երջանիկ ամուսնութիւն:

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖԹՃԵԱՆ



ՄՓԻՒՌԸ ԵՒ ՆՈՐ ՄԱԿԱԲԷԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԸ ՄՊԱՍՈՒՄԸ

«...դարձան ի պաշտաւն անօրէնութեան եւ զոհեցին կոոց նոցա»:
Ա. Մկբ 1.45

Հայ ժողովուրդը հնագոյն դարերէն ցրուած գաղութներ ունեցած է իր երկրէն դուրս: Անոնք զանազան պատճառներով մեկնած են հայրենիքէն, հաւանաբար ապրած վերադարձի երազներով, ու կամայ կամայ կամ արագ արագ ձուլուած...

Երբ «Սփիւռք» կ'ըսուէր, կը հասկնայինք այն ցրուումը՝ որ Մեծ Աղէտով յառաջացաւ: Այսօր սակայն Հայաստանի վերանկախացման հետ, հայրենիքէն զանգուածներ դուրս խուժած են, եւ եզրը երկու ստորագութիւն առած է իր մէջ. Աւանդական եւ Ներկայ:

Հակառակ բոլոր ցանկութիւններուն, աւանդական Սփիւռքը երբեք ալ չկրցաւ արժէքներու նոյն համակարգով բռնուած մէկ ամբողջութիւն ըլլալ, պատճառները բազմաթիւ են, յանցանքներն ալ բազմատեսակ:

Իսկ Հայաստանէն արտագաղթած զանգուածները մեծամասնութեամբ չհամակերպուեցան աւանդական Սփիւռքին, իսկ վերջինս ալ անակնկալի եկած՝ իր դալուկ չափանիշներուն մէջ անշարժացած մնաց, անհորիզոն իր աչքերը բանալ գոցելով:

Ո՞ւր կ'երթանք...

Նաւը խորտակուելու վրայ է, եւ շուտով պիտի քայքայուի անոր թիակներու կազմը, հիմնախիլ պիտի ըլլայ կայմը, առագաստը պատառտուելով անկարկտելի ծուկներու պիտի վերածուի, դիտարանը պիտի վար իյնայ, դեկը իր ամբողջ կազմածով պիտի ընկղմի, ողնափայտը պիտի կոտրուի, վանդակապատը պիտի քանդուի...եւ փոթորկայոյց ջուրներուն վրայ պիտի ծփան բեկորները...

Ի՞նչ ընել:

Ակնարկեցի, որ Սփիւռքը չկրցաւ արժէքներու նոյն համակարգով բռնուած մէկ ամբողջութիւն ըլլալ: Հարցումը որ կ'ուզեմ դնել այստեղ սա է. Կա՞յ կառոյց մը, որ յարաբերաբար ամենէն տարածուն տապանն է աստուածաշունչ արժէքներու, եւ ամենէն աւելի մեծ թիւով բազմութիւններ կրնայ տանիլ ալեկոծ ծովուն վրայ:

Այո, եւ անիկա Հայ եկեղեցին է:

Իր մերթ ճղճիմ հաշիւներով, իր ընդվզեցուցիչ հակամարտութիւններով, իր այլազան ու բազում թերութիւններով հանդերձ, անիկա Յիսուսակերտ տապան մըն է, շտեմարան երկնատուր շնորհքներու, եւ ի

կարողութեան՝ հսկայ զօրութիւն մը ժողովումի:

Հո՛ն է, որ նոր մակարէականութիւն մը պիտի ծնի առանց որեւէ յապաղումի:

Ի՞նչ ըսել կ'ուզեմ:

Երբայական պատմութեան մէջ Ն. Ք. 2րդ դարուն յեղափոխութիւն մը պայթեցաւ: Եւ այդ յեղափոխութիւնը «Մակարէական» կը կոչուի:

Ն. Ք. 198ին, Պաղեստինը Սելեւկեան թագաւորութեան կ'ենթարկուի: Հելլենականացման քաղաքականութիւնը հետզհետէ կը խստանայ: Ենթարկուողներ կ'ըլլան, որոնք մինչեւ իսկ «ըստ ավրինացն հեթանոսաց» մեհեաններ կը շինեն Երուսաղէմի մէջ, կը հրաժարին իրփատութեան ավանդութենէն, սրբազան գրականութիւնը կը մերժեն, հեթանոսներու հետ ամուսնութիւններ կը կնքեն: Ընդդիմացողները՝ կրօնական հալածանք եւ կոտորած կը գտնեն: Տաճարը կը կողոպտուի եւ կը սրբապղծուի: Յունական կուռքերու պաշտամունք կը պարտադրուի, մահապատիժով կ'արգիլուին գոհագործութիւնները, Շաբաթ օրը պահելը, տօներու կատարումը, իրփատութիւնը, եւ սրբազան գրականութիւնը կը պատուտուի ու կը հրկիզուի:

Յասման ժամը հասած էր: Ն. Ք. 167 թուական: Ահա Մատթիա քահանան եւ Հինգ զաւակները կը սկսին յեղափոխութիւնը: Ու այս կ'ըլլայ իրենց սկզբունքը. «Ըստ պատուիրանաց հարցն մերոց գնասցուք: Քաւ լիցի մեզ թողուլ զարէնս եւ զիրաւունս Աստուծոյ...Ոչ թողումք զպաշտան հարցն, ոչ թիւրիմք յաջ կամ յահեակ» (Ա. Մկր 2.20-21, 22):

Մակարէական յեղափոխութիւնը 130 տարիներ երբայեցիներու կրօնական եւ ազգային ինքնութեան պահպանման ծառայեց:

Մեր պատմութեան մէջ անիկա ներշնչման օրինակ ծառայած է Վարդանանց շարժումին:

Եղիշէ Պատմիչ գրած է, թէ Վարդան Մամիկոնեան պատերազմի դաշտին վրայ, նախքան ճակատամարտը ձեռքը առնելով Մակարայեցուոց Գիրքը՝ «ի լսելիս ամենեցուն» վկայութիւններ կը կարդայ Մատթիայի եւ անոր հետեւողներու քաջութեան մասին, եւ «յորդառատ բանիւք զելս իրացն» կը բացատրէ անոնց (Եղիշէ, «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, գլ. Ե»):

Այսօր մենք ալ պատերազմի դաշտին մէջն ենք. Սփիւռքը պատերազմի դաշտ է: Եւ մակարէական յեղափոխութիւնը ելք ցոյց կուտայ:

Մեր այսօրուայ պատերազմի թշնամին երեւելի է, այլ աներեւոյթ: Անիկա քաղքենիացման ոգին է, որ թափանցած է ամէն տեղ, մինչեւ իսկ եկեղեցական կեդրոնները: Ամենուր իր մեհեանները կը շինէ անիկա:

Քաղքենիացման մեհեաններուն վարդապետութիւնն է.

— հաւաքական ինքնութեան մոռացում կամ ուրացում.

— կտակեալ արժէքներուն նկատմամբ գաղջութիւն կամ անտար-

բերութիւն.

— անհատապաշտութիւն.

— անձնական շահի հետամտութիւն.

— սեփական հաճոյքներու հտեւէն ըլլալ.

— ինքնարդարացման հոգեբանութիւն.

— յանցանքի եւ մեղքի գիտակցութեան նօսրացում:

Էպպէս հակա-քրիստոնէական է քաղքենի ոգին: Հետեւաբար, հակա-հայկական է անիկա: Չեմ ըսեր, թէ հայկականը կատարելապէս քրիստոնէական է, որովհետեւ գիտեմ թէ որքա՛ն այլասերում կայ հայկական անուանուածին տակ: Բայց վստահութեամբ գիտեմ նաեւ, որ հայկականը անհասկնալի է քրիստոնէական արժէքներու համակարգէն դուրս: Անիկա մեր ինքնութիւնը կազմաւորեց, եւ ցարդ կը մնայ մեզ ժողովող ամենէն զօրաւոր ուժը: Մեր հայրերը զայն ոչ թէ պատահաբար ընդունեցին, այլ ընդունեցին, որովհետեւ անիկա իրենց սրտին խօսեցաւ: Ոչ ոք ոչ ինչ կ'ընդունի եւ երկար ժամանակ յանձնառու կ'ըլլայ անոր նկատմամբ, եթէ անիկա իր խորունկ էութեան բան մը չըսէ: Քրիստոնէութիւնը մեր հայրերու սրտին բան մը ըսաւ, յաւիտենական Բանը փոխանցեց: Եւ անոնք ու մենք դիմացանք նեղութեան, անձկութեան, փորձութեան եւ կոտորածի բոլոր ճամբաներուն մէջ: Ծիշդ այդ դիմանալը բանեցնող գլխաւոր արժէքները քրիստոնէական են: Իսկ քաղքենիական արժէքները կը կազմալուծեն...

Այսօր ինչե՞ր են պէտք:

Գլխաւորաբար՝

1. Նախանձախնդիր եկեղեցականութիւն մը՝ «Նոր Մակարէականներ» կ'ուզեմ կոչել զանոնք: Պատրաստուած թէ՛ հոգեւորապէս, եւ թէ՛ իմացապէս:

2. Վանականութեան վերականգնում:

3. Եկեղեցական կարգերու վերատեսութիւն եւ վերարժեւորում:

4. Հաւաքում շնորհքներու, որոնք կրնան կազմել Ստեփանոս Նախասարկաւազի զօրքը: Այդ զօրքը պիտի զբաղի ընկերային ծառայութեամբ:

5. Հայ աստուածաբանութեան եւ բարոյագիտութեան վերակենսաւորում:

6. Հայ աղօթքին եւ հոգեւոր երգին ստեղծագործական վերանորոգում:

7. Հրաժարում կրաւորականութենէ եւ հակազդողականութենէ, եւ ներգործականութիւն:

Այսօր Նոր Մակարէականներո՛ւն իրաւունքն է Հայաստանեայց Տօտին առաջնորդութիւնը: Անո՛նց «այո»ն եւ անո՛նց «ոչ»ը պիտի վարձատրուի երկինքէն ու նաւը ողջ պիտի ընթանայ եւ հասնի ցանկալի ափը:

ԳԱՌՆԻԿ Ք. Գ.

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

«...որ համբերեսցէ ի սպառ՝ նա կեցցէ» Մտ10.22:

*Ով Տէր, կեանքս խճողող առօրեայ մանրուքները
Ամբողջութեամբ Քեզի կը յանձնեմ:*

*Վայրկեանիս Տէրը Դուն ես:
Այդ մանրուքներուն իսկ ընդմէջէն ինձի կը ներկայանաս...
Ու կը ժպտիս:
Կը ժպտիս փշրանքներուս...
Ու համբերութիւն կը ներշնչես:*

*Համբերութիւն՝
Որպէսզի սիրող աչքովդ ինքզինքս տեսնեմ,
Այնպէս ինչպէս Դուն կը տեսնես:*

*Համբերութիւն՝
Որպէսզի էութիւնս ամենապաշտպան գրկիդ յոյսով ողողուի:*

*Համբերութիւն՝
Որպէսզի ժամանակաւորին խաբուսիկ դիմակը պատուի
Ու լուսապայծառ հայեացքդ արեգակնանայ:*

*Համբերութիւն՝
Որպէսզի, շրջապատիս շարժումին մէջ՝
Լսեմ ու կանչիդ անսամ:*

*Համբերութիւն՝
Որպէսզի մեղքերս հալեցնող հրոյդ խայծը տանիմ:*

*Համբերութիւն՝
Որպէսզի հետեւելով օրինակիդ
Սիրող աչքովդ եղբօրս նայիմ:*

*Համբերութիւն՝
Որպէսզի հետեւելով օրինակիդ
Գուրգուրոտ ձեռքովդ եղբօրս հասնիմ:*

Համբերութիւն՝

Որպէսզի հետեւելով օրինակիդ
Թշնամիիս ներեմ:

Համբերութիւն՝
Որպէսզի ըմբռնեմ թէ թշնամիդ է իսկական թշնամիս՝
Աղբիւրը չարին,
Եւ ոչ՝ մութին մէջ խարխափող եղբայրս:

Համբերութիւն՝
Որպէսզի եկեղեցւոյ պայծառութեան մասնակցութիւնս
կատարեալ ըլլայ:

Համբերութիւն՝
Մինչ փշրուածս կը վերականգնես,
Կ'այլափոխես:
Կը յարուցանես,

Համբերութիւն...:

ԿԱՐՕ ՆՈՒՈՒՏԵԱՆ

Նուիրատուութիւններ «Լոյս»ին

| | |
|----------------|-----------|
| Տիան Թագլորեան | 75 տոլար |
| Սօսի Սարաֆեան | 100 տոլար |

Մասրենախօսական

«Ամառան» եւ «Զմեռան»

հատորներէն քաղուած

Աստուածամօր քարոզները

Գրիգոր Տաթեւացի, Անթիլիաս, 2010, 256 էջ
քարգմանեց՝ Թամար Տասնապետեան

Գրիգոր Տաթեւացին (1346-1409), 14րդ դարու երկրորդ սկիզբի հանրայայտ մատենագիր, ճանչցուած է իբրեւ եռամեծ իմաստասէր, աստուածաբան, եկեղեցական գործիչ, մանկավարժ դաստիարակ, կարկառուն գիտնական եւ մանրանկարիչ: Բազմապիսի արժանիքներով օժտուած անձնաւորութիւն՝ ան թողած է հարուստ գրական ժառանգութիւն: Հեղինակած է իմաստասիրական, մեկնաբանական ու կրօնական վաստակաւոր երկեր, որոնք ունին հանրագիտարանային արժէք. ինչպէս՝ «Համառօտ տեսութիւն ի գիրս Պորփիրիի», «Լուծումն համառօտ ի տեսութիւն Դաւթի Անյաղթի», «Ոսկեփորիկ», «Գիրք հարցմանց», «Գիրք քարոզութեան», եւ այլ գործեր:

Գրիգոր Տաթեւացիի «Գիրք քարոզութեան» հաստատիր երկը կը բովանդակէ «Զմեռան» հատորը. տպուած Կ. Պոլիս, 1740, 748 էջ, եւ կը պարունակէ 160 քարոզներ (33ը՝ ուրիշէ), եւ «Ամառան» հատորը. Կ. Պոլիս, 1741, 740 էջ (Երուսաղէմ, 1998), ներփակելով 184 քարոզներ (21ը՝ ուրիշէ):

Տարիներէ ի վեր, հայրախօսութեան դասախօս եւ հանրածանօթ մարեմաբան Թամար Տասնապետեան, ժրջան աշխատասիրութեամբ, Ս. Կոյսի մասին հայ մատենագիրներու գրութիւնները հաւաքած ու հրատարակած է, մատնանշելու համար հայ գրողներու պաշտամունքը Աստուածամօր նկատմամբ, ու անոր ունեցած դերը Յիսուս Քրիստոսի փրկագործութեան խորհուրդին մէջ:

«Նախաբան»ին մէջ Տասնապետեան կը խոստովանի թէ՛ «Գրիգոր Տաթեւացիի ինքնայօժար հիացող մը չեմ եղած: Արեւմուտք ուսանած ըլլալով, ես ալ, արդարեւ, ժամանակ մը եղած եմ անոնցմէ, որոնք, առանց ճանչնալու բաւարարապէս անոր գրութիւնները, ունեցած են իրենց բերնին վրայ թերահաւատութեան ժպիտ մը: Բայց զանոնք կարգալէ եւ ուսումնասիրելէ հտք, ստիպուած եղայ անխարդախ կերպով յայտարարելու, թէ՛ շատ շուտափոյթ եղած էի, շատ ուրիշներու պէս, եւ գալու հետեւեալ եզրակացութեան. ան որ կ'ուզէ ճանչնալ Սուրբ Կոյսը (Կոյս մը, որ ներդաշնակ է Հայ Եկեղեցւոյ իշխանութեան հետ, Սուրբ Գիրքերուն եւ Եկեղեցական Աւանդութեան հետ), պէտք է պելէ տաթեւեան մարեմաբանութիւնը...

Ոչ մէկ ուրիշ մարեմական գրութիւն, ոչ իսկ ամբողջ կարդացածիս

եւ ուսումնասիրածիս լրութիւնը, կրցած էին հաղորդել Մարիամի՝ Աստուծոյ գլուխգործոցին մասին այսքան յստակ, այսքան կենդանի, այսքան կատարեալ, այսքան լուսաւոր եւ այսքան հմայիչ գաղափար մը, միաժամանակ պարզ եւ վեհ»:

1407 թուին, Ս. Գրիգոր Տաթեւացի իր խօսած ճառերը Քարոզգիրքի վերածելու առնչութեամբ հետեւեալ պատճառները նշած է. իր բառերով՝

«Նախ հարկեցեալ յիղբարց համաշունչ աշակերտաց: Երկրորդ, զի ոչ գոյր գիրք քարոզած մերս վարդապետաց, բայց խորին ասացուածք: Եւ, երրորդ պատճառ՝ զի ես տարտամ հոգևով եւ ծոյլ մարմնով՝ ոչ կարացի բազմաց քարոզել: Վասն որոյ հնարեցայ զգիրս քարոզաց, զի եւ ինձ մասն լիցի ընդ ձեզ բարեաց...»

Ձոր եւ յերկուս հատորս արարի վասն դիւրութեան. զմինն Զմերան, եւ զմիւսն Ամարան որպէս տեսանէք, Առաջինն ի Ծննդեանէն սկսեալ եւ կարգաւ կատարեալ ի Գալուստ Հոգևոյն Սրբոյ. Երկրորդն ի Գալստեանէն սկսեալ եւ յԱւագ Տօնսն աւարտեալ...»: (Ամարան հտոր., էջ 720-721):

Աստուածամօր նուիրուած Տաթեւացիին քարոզները արեւմտահայերէն թարգմանելով, Թամար Տասնապետեան մեզ հաղորդ կը դարձնէ Տաթեւացի վարդապետի դաւանած նոր ըմբռնումը եւ արժեւորելը Ս. Մարիամ Աստուածածնին.

«Գրիգոր Տաթեւացիի մարեմաբանութիւնը նոր է», կ'ըսէ Տասնապետեան, «որովհետեւ, ան մեզի կը ներկայացնէ Սուրբ Կոյսը նոր լոյսի տակ, այսինքն ինչպէս նոր արարած մը, երեւութապէս նման բոլոր զուտ արարածներուն, բայց իրականին մէջ շատ տարբեր. ան արարած մըն է միշտ ընկղմած իր Արարիչին անսահման լոյսին մէջ, մէկ եւ երրորդական Աստուծոյ լոյսին մէջ, շրջապատուած բացառիկ եւ դիւթիչ փառաւորութեամբ մը, որ կը բղխի իր եզակի առաքելութենէն» (էջ 8):

Թամար Տասնապետեանի աշխատասիրութեանց այս 64րդ հատորը կազմուած է Տաթեւացիէն՝ 4 քարոզ (էջ 13-141), Յովհան Որոտնեցիէն՝ 1 քարոզ (էջ 142-158), եւ ուրիշէ՝ 3 քարոզ (էջ 159-240): Ասոնց կատարեալ թարգմանութեան շնորհիւ, հեզասահ կ'ընթանայ բնագիրին ընթերցումը. նաեւ, էջատակներու տրուած ծանօթութիւնները նիւթին հասկացողութեան կը նպաստեն:

Այս վայելուչ հատորը հրատարակուած է Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հայկական բաժանմունքին մեկենասութեամբ: «Աստուածամայրը գահի վրայ» կողքի նկարը գործն է Վ. Սուրէնեանցի. իսկ ետեւի Ս. Գրիգոր Տաթեւացիի նկարը գծած է Յովնաթան Յովնաթանեան:

Թամար Տասնապետեանի այս շահեկան թարգմանութիւնը օգտակար պիտի դառնայ մեր կրօնական կեանքի զարգացման մէջ:

ԲԱԲԳԿԵՆ ԹՕՓՃԵԱՆ

ՀԱՆԳԻՍ

S. Սմբատ Արք. Լափաճեանի

(1927 - 2010)

Շաբաթ Յուլիս 17ի առաւօտուն, «Արարատ» տան Միշըն Հիլզի կեդրոնին մէջ շիջեցաւ միաբանութեան երիցագոյն անդամներէն ու Արեւմտեան Միացեալ Նահանգներու թեմի բազմաշխատ նուիրեալներէն Սմբատ Արք. Լափաճեան՝ կնքելով լիարժէք կեանք մը, որուն վերջին աւելի քան 40 տարիները կենսագործուեցան Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմէն ներս:

Վերջին Օծման եւ Թաղման Կարգը տեղի ունեցաւ կիրակի 25 Յուլիս 2010ին, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ, որուն մասնակից դարձաւ թեմի հոգեւորականաց դասը գլխաւորութեամբ Առաջնորդ Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի: Արարողութեան իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Արեւելեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Օշական Արք. Զօյլեան: Եկեղեցական կարգին մասնակցեցան նաեւ Էջմիածնական թեմի հոգեւորական հայրեր, հայ յարանուանութեանց ներկայացուցիչներ եւ բոլոր եկեղեցիներու հոգեւոր Առաջնորդներ: Ի յարգանս Արեւմտեան թեմի առաջին առաջնորդի վաստակին, Վեհափառ Հայրապետին բարձր արտօնութեամբ, հոգելոյս Սրբազան հօր մարմինը ամփոփուեցաւ Ս. Խաչ Մայր Տաճարի շրջափակին մէջ:

«ՀԱՍԿ» (յապաւուած)